Արման Ս. Եղիազարյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԱՇՈՏ Գ ՈՂՈՐՄԱԾԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Մաս Բ: Պայքար հայոց թագավորության միասնականության պահպանման համար*

Բանալի բառեր - Աշոտ Ողորմած, գահակալություն, Բյուզանդիա, երկրամաս, քաղաքականություն, զավթել, զինուժի աջակցություն, մարտահրավեր, ծավալապաշտական քաղաքականություն, ավատատեր:

Մուտք

960-ական թթ. վերջը և 970-ական թթ. առաջին կեսը Աշոտ Գ Ողորմածի գահակալության շրջանի առավել բարդ և հանգուցային փուլերից էր: Հզորության գագաթնակետին գտնվող հայոց թագավորությունն այդ ժամանակ կանգնեց մեծ վտանգի առաջ, քանի որ անչափ հավակնոտ նվաճողական ծրագրերով հանդես եկան Բյուզանդիայի կայսրեր Նիկեփոր Փոկասը (963-969 թթ.) և Հովհաննես Չմշկիկը (969-976 թթ.): Բյուզանդիայի հիմնական նպատակը Կիլիկիայից մինչև Պաղեստին ընկած երկրներին տիրելն էր, բայց այդ ճանապարհին նա մի կողմից ձգտում էր օգտվելու Բագրատունյաց թագավորության զինուժի աջակցությունից, իսկ մյուս կողմից Հայաստանի ներսում երկպառակություն սերմանելու և նրանից նորանոր երկրամասեր պոկելու փորձեր էր անում:

Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության թիրախում էին Տարոն-Տուրուբերանը, Այրարատի Բասեն գավառը, իսկ հեռանկարում՝ նաև Վասպուրականը: Բյուզանդիան փորձում էր հնարավորինս օգտվել հայ ավատատերերի և կենտրոնական իշխանության հարաբերություններում առկա խնդիրներից և օգտագործել որոշ ավատատերերի վերամբարձ նկրտումները: Եվ ցավալիորեն կայսրերին հաջողվում էր հասնել իրենց նպատակներին, ինչի հետևանքով մի կողմից կրճատվում էր հայոց թագավորության տարածքը, իսկ մյուս կողմից միասնական թագավորության մասնատումը թուլացնում էր նրա

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.02.2020:

դիմադրողական կարողությունները՝ հարևանների համար այն դարձնելով ավելի խոցելի:

Աշոտ Գ-ին հաջողվեց ժամանակավորապես կասեցնել 968 թ. Տարոնը զավթած Բյուզանդիայի առաջխաղացումը: Ուստի կայսրությունը սպասելու էր նոր առիթի՝ իր նպատակները կյանքի կոչելու համար:

Հանգիստ չէր նաև թագավորության հոգևոր կյանքը. Բյուզանդիայի առաջխաղացման պայմաններում այն դարձյալ բախվել էր քաղկեդոնականության տարածման վտանգին, որը, բարեբախտաբար, հնարավոր եղավ չեզոքացնել:

1. Տարոնի զավթումը Բյուզանդիայի կողմից

960-ական թթ., երբ արաբա-բյուզանդական հակամարտության պայմաններում Բյուզանդիայի զորքը հավակնում էր տիրելու Կիլիկիային և Հյուսիսային Ասորիքին, Տարոնը ևս հայտնվել էր կայսրության ուշադրության կենտրոնում:

Ինչպես հայտնի է, Տարոն գավառը 964 թ. ռազմակալվել էր արաբական զորքի կողմից, սակայն Աշոտ Գ-ին հաջողվել էր պարտության մատնել թշնամուն և ազատագրել այն[1]: Ակնհայտ է, որ նա Տարոնը համարում էր հայոց թագավորության անքակտելի մասը և վճռականորեն էր տրամադրված այդ գավառի նկատմամբ հավակնություններ ունեցողների դեմ: Այդ առումով հույժ կարևոր են Տարոնի հանդեպ Բյուզանդիայի իրականացրած քաղաքականության մասին Ասողիկի և Հովհաննես Սկիլիցեսի շարադրանքներում ներառված դեպքերի հերթականությունն ու տրամաբանությունը: Դրանք տարբեր հետազոտողների կողմից ընդհանուր առմամբ անտեսվել են, իսկ իրադարձությունների ներկայացումը վերածվել է մի պարզունակ պատումի:

Նիկեփոր Փոկաս կայսեր գահակալման շրջանում հայ-բյուզանդական հարաբերություններում առկա խնդիրները ներկայացրել է Սմբատ սպարապետը, սակայն միայն դավանանքային հակադրության տեսանկյունից[2]: Իսկ Ասողիկը հաղորդում է, որ «....ի ՆԺԵ թուականին (415 թ.՝ մարտ, 966 թ. մարտ, 967 թ.) խաւարեցաւ արեգակն, եւ վախճանեցաւ Տարաւնոյ իշխանն Աշոտ: Եւ Տարաւնոյ Հոռոմք տիրեցին»[3]: Այսինքն՝ պատմիչը ներկայացնում է երեք դրվագ՝ Արևի խավարումը, իշխան Աշոտի մահը և Տարոնին Բյուզանդիայի տիրելը:

Հովհաննես Սկիլիցեսի հիշատակությունը որոշակիորեն պարզաբանում է Ասողիկի խիստ սեղմ վկայությունը: Ըստ բյուզանդական հեղինակի՝ երբ

1 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ. Ողորմածի դարաշրջանը: Մաս Ա. Հայոց թագավորության վերելքը (953-966 թթ.), «Վէմ», Եր., 2019, N 3, էջ 57:

2 Տե՛ս «Սմբատայ սպարապետի Տարեգիրք», ի Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 3:

3 **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», հատ. ԺԵ., Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 757:

Վէմ համահայկական հանդես, ԺԸ (ՀԺ) տարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

բյուզանդական զորքի կողմից Հյուսիսային Ասորիքի ու Կիլիկիայի քաղաքների գրավման ընթացքում[4] մահմեդականներն Անտիոքում 967 թ. սպանեցին տեղի Քրիստափոր պատրիարքին (960-967 թթ.), իսկ Երուսաղեմում 968 թ. մայիսի 28-ին ողջակիզեցին պատրիարք Հովհաննես VII-ին (964-968 թթ.)[5], նույն 968 թվականին «Կայսեր կողմն անցան Գրիգոր և Բագարատ եղբայրները, նրան ընձեռելով իրենց Տարոն երկիրը: [Կայսրը] նրանց պատրիկի պատվաստիճան շնորհեց, շատ եկամտաբեր կալվածներ նվիրաբերեց: Արեգակի խավարում էլ եղավ դեկտեմբեր ամսի 22-ին....»[6]:

Փաստորեն, Ասողիկը Տարոնի իշխան Աշոտի մահով փակում է Տարոնի հայկական իշխանության պատմության էջը, քանի որ նրա որդիները գավառը հանձնել էին Բյուզանդիային, իսկ ահա Հովհաննես Սկիլիցեսը ներկայացնում է Տարոնի՝ մահմեդականների դեմ պատերազմներով ուղեկցվող հանձնման պատմական հանգամանքները՝ դարձյալ նշելով Արևի խավարման մասին:

Այստեղ հարկ է պարզաբանել այն, թե ինչպես է Բյուզանդիան տիրացել Տարոնին: Հ. Բարթիկյանը համարում է, որ Աշոտ իշխանը Տարոնը կտակել էր կայսրությանը, և նրա մահից հետո Բյուզանդիան տիրացել էր իր «ժառանգությանը»[7]: Ընդ որում, հետազոտողը չի բացառում, որ Աշոտը պարզապես սպանվել է[8]:

Գ. Գրիգորյանը պատմիչների տեղեկությունները մեկնաբանում է հետևյալ կերպ. «Ըստ Ասողիկի, Բյուզանդիան բռնությամբ է Տարոնին տիրել, իսկ Հովհաննես Սկիլիցեսը Տարոնի կցումը համարում է նրա տերերի «կամավոր» զիջման արդյունք»[9]: Սակայն Ասողիկի տեղեկությունը չի կարող միա- նշանակորեն մեկնաբանվել որպես «բռնությամբ տիրել», քանի որ «Տարաւնոյ Հոռոմք տիրեցին» արտահայտության մեջ գործածված «տիրել»-ը ունի նաև «տէր լինել,

4 Խոսքը 963 թ. Բյուզանդիայի արևելից զորավար (դոմեստիկոս) Հովհաննես Չմշկիկի գլխավորած բանակի՝ Կիլիկիա ներխուժելուց մինչև 969 թ. Անտիոքի գրավումը տեղի ունեցած ռազմական գործողությունների մասին է:

5 Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Հրաչ Բարթիկյանի**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 292, ծան. 150:

6 Նույն տեղում, էջ 28:

7 **Հովհաննես Սկիլիցես**. առաջաբան, էջ XXVI: Հայտնի է, որ Բյուզանդիան Տարոնի նկատմամբ փորձում էր որոշակի իրավունքներ ձեռք բերել՝ տեղի իշխանների կտակների հիմամբ: Մասնավորապես հայտնի են X դ. առաջին կեսին Տարոնի իշխաններից Բագրատի և Թոռնիկի կտակները, որոնցից առաջինն ամուսնացել էր բյուզանդացի բարձրաշխարհիկ մի կնոջ հետ՝ իր տիրույթները կտակելով այդ կնոջից ծնված զավակներին (տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, «Բյուզանդական աղբյուրներ», Բ, **Կոստանդին Ծիրանածին**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Հրաչ Բարթիկյանի**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 8-9), իսկ երկրորդը կայսրությանն առաջարկել էր իր տիրույթները՝ բյուզանդական արքունիքում գտնվելու հնարավորության դիմաց (տես նույն տեղում, էջ 9): Այս իրադարձությունների մասին մանրամասն տես **Դանիելյան Է.**, Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (IX դարի երկրորդ կես - X դար), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1978, N 1, էջ 129-134:

8 Հ. Բարթիկյանը, խոսելով Տայքի Դավիթ կուրապաղատի սպանության մասին (1000/1001 թ.), շարունակում է. «Նույնը չկատարվե՞ց արդյոք Տարոնի իշխան Աշոտի հետ» (տես **Հովհաննես Սկիլիցես**. առաջաբան, էջ XXVII):

9 **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 146:

տիրանալ, տիրապետել, իշխել» իմաստները[10]: Ուստի Տարոնին տիրելը կարող էր նշանակել նաև գավառի անցումը Բյուզանդիային և նրա՝ բյուզանդական արքունիքին ենթակա դառնալը: Այս տեսակետը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ գավառը հանձնվել է կայսրությանը վախճանված Աշոտ իշխանի որդիների կողմից, և, ինչպես կտեսնենք, Հովհաննես Չմշկիկի արշավանքի ժամանակ այն դեռևս ամբողջությամբ և վերջնականապես կցված չէր կայսրությանը: Պատահական չէ, որ Բյուզանդական կայսրության պատմության վերջին հետազոտություններում նշվում է, որ «966 կամ 967 թ. Տարոնն անցավ Բյուզանդիայի տիրապետության ներքո»[11]:

Այսպես թե այնպես Տարոնի զավթումը Բյուզանդիայի կողմից չի կարելի կապել Աշոտ Գ-ի թուլության կամ բացթողման հետ, առավել ևս, որ, ինչպես տեսանք, նա այդ դեպքից չորս տարի առաջ մեծ վճռականությամբ Տարոնն ազատագրել էր մահմեդականների ռազմակալումից: Խնդիրն այն է, որ Տարոնի վախճանված իշխանի որդիները հայրական ժառանգությունը հանձնել էին Բյուզանդիային՝ «եկամտաբեր կալվածների» դիմաց, այսինքն՝ կատարվել էր տարածքների գուցե ոչ հավասարաչափ փոխանակում: Ավատատիրական հարաբերությունների տեսանկյունից գործարքին հայոց թագավորի միջամտությունը իրավական առումով որոշիչ լինել չէր կարող, քանի որ Տարոնի ավատատերերն իրենք էին գավառը հանձնել Բյուզանդիային, իսկ ռազմական միջամտության գնալու Աշոտ Գ-ն ի զորու չէր: Սակայն ստորև կտեսնենք, որ հայոց թագավորը հեշտությամբ չի համակերպվել Տարոնի զավթման հետ, ինչի հետևանքով սրվել էին Բյուզանդիայի հետ հարաբերությունները:

Ինչ վերաբերում է Տարոնի զավթման տարեթվին, ապա այն, բխեցնելով Արևի խավարման իրողությունից, թվագրվում է 966-968 թթ.[12]: Չնայած դեկտեմբերի 22-ի խավարումը տեղի է ունեցել 968 թ.[13], Գ. Գրիգորյանը այդ իրողությունը թողել է աննկատ: Ձեռագրերի քննությամբ նրան հաջողվել է ճշգրտել, որ Ասողիկի հիշատակած տարեթիվն իրականում հայոց 416 թվականն է (մարտ, 967 թ. - մարտ, 968 թ.), որի հիմամբ նա հանգել է այն եզրակացության, որ խոսքը ոչ թե 968 թ. դեկտեմբերի 22-ի, այլ 967 թ. հունիսի 10-ի Արևի խավարման մասին է, ուստի Տարոնի իշխանը վախճանվել է 967 թ., իսկ նրա որդիները հարկադրված[14] Բյուզանդիա են հեռացել արդեն 968 թ.[15]: Ի վերջո, Գ. Գրիգորյանը Տարոնի գրավման տարեթիվ է համարում 968 թվականը[16]:

---

10 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. երկրորդ (Հ-Ֆ), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 878:

11 "The Cambridge history of the Byzantine Empire c. 500-1492", edited by **J. Shepard**, Cambridge University press, 2009, p. 357.

12 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**. առաջաբան, էջ 293, ծան. 154: Բյուզանդիայի կողմից Տարոնի զավթման թվագրումների մասին մանրամասն տե՛ս **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 146, ծան. 135:

13 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**. առաջաբան, էջ 293, ծան. 154:

14 Այն, որ Բյուզանդիան ստիպել է եղբայրներին հանձնել Տարոնը, ըստ Գ. Գրիգորյանի, հիմնավորվում է նրանով, որ եղբայրները Բյուզանդիայում միացել էին Վասիլ Բ կայսեր (976-1025 թթ.) դեմ փոքրասիական զինվորական ավագանու՝ Վարդաս Սկլերոսի գլխավորությամբ բարձրացրած ապստամբությանը (976-979 թթ.). «….մենք Տարոնի իշխաններին տեսնում ենք կայսրության դեմ ընդդիմացածների թվում» (**Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 156): Այդ մասին

Տարոնի 968 թ. զավթման տարբերակի հիմնավորման կռվանն այն է, որ, ըստ Ասողիկի և Իբն ալ-Ասիրի, հաջորդ տարի բյուզանդական բանակը գրավեց Մանազկերտը: Ասողիկը հաղորդում է, որ «….եւ ի ՆԺԷ (417 թ.-968/969 թ.) թուականին Վարդ (իմա՛ Վարդաս Փոկաս՝ բյուզանդական հայազգի զորավար - Ա. Ե.)՝ եղբաւրորդի Նիկիփոռայ (իմա՛ Նիկեփոր Փոկաս՝ Բյուզանդիայի կայսր (963-969 թթ.) - Ա. Ե.) զաւրու ծանու գայ յԱպահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք. եւ առեալ զնա՝ ի հիմանց բրեալ խրամատաց զպարիսպ նորա»[17]: Իբն ալ-Ասիրը տեղեկացնում է, որ հիջրայի 359 թ. (նոյեմբեր, 969 թ. - նոյեմբեր, 970 թ.) բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը պաշարումից հետո[18]: Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն այս իրադարձության տարեթիվ է համարում 969 թվականը՝ համադրելով երկու պատմիչների ժամանակագրական տեղեկությունները[19]:

Աշոտ Գ-ի գահակալության շրջանին վերաբերող մեր առաջին հետազոտության մեջ մենք արդեն խոսել ենք 964 թ. Ապահունիքին (Մանազկերտ քաղաքով), տիրող արաբական կայսիկների ամիրայության ոչնչացման մասին[20], որոնց տիրույթներին տեր դարձած Հյուսիսային Ասորիքի (Հալեպ կենտրոնով) Համդանյան ամիրա Սայֆ ալ-Դաուլայի մահից հետո (967 թ.) դրանք պետք է հայտնվեին մասնավորապես Աշոտ Գ-ի և Բյուզանդական կայսրության շահերի ոլորտում: Առավել ևս, որ Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, թե հայոց թագավոր Սմբատ Ա-ի (891-914 թթ.) սպանությունից հետո կայսիկների տիրակալները հպատակություն են հայտնել կայսրությանը և հարկ վճարել նրան՝ դրանով իսկ հիմնավորելով կայսրության իրավունքը կայսիկների հողերի նկատմամբ[21]: Սակայն Մանազկերտի ուղղությամբ կատարված արշավանքից հետո կայսրության բանակը, ամենայն հավանականությամբ, վերադարձել էր կամ ստիպված լքել էր քաղաքը[22]: Խնդիրն այն է, որ դրանից որոշ ժամանակ անց՝ 974 թ., Բյուզանդիայի կայսր Հովհաննես Չմշկիկը (969-976 թթ.) մուտք գործեց Տարոն միայն Աշոտ Գ-ի հետ հաշտություն կնքելուց հետո, չնայած որ, դատելով հայոց թագավորին կայսեր գրած

հիշատակում է Ասողիկը (տե՛ս **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 763): Սակայն Վարդաս Սկլերոսի ապստամբության մասնակիցներին «կայսրության դեմ ընդդիմացածներ» համարելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ խոսքը ոչ թե կայսրության, այլ կայսեր դեմ ապստամբության մասին է: Փաստորեն, երկու եղբայրները մասնակցել են ոչ թե կայսրության դեմ ապստամբության, այլ պարզապես գահակալական կռիվների, որոնց ընթացքում Վարդաս Սկլերոսն իրեն հռչակել է կայսր (տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**. առաջաբան, էջ 56-57):

15 Տե՛ս **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 146-148:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 155:

17 **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 757:

18 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, **Իբն ալ-Ասիր**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Արամ Տեր-Ղևոնդյանի**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 198-199:

19 Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 185:

20 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ. Ողորմածի դարաշրջանը: Մաս Ա. Հայոց թագավորության վերելքը (953-966 թթ.), էջ 57:

21 Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-13:

22 Է. Դանիելյանը համարում է, որ 968-974 թթ. միջակայքում Հարք և Ապահունիք գավառները Աշոտ Գ-ն կցել էր հայոց թագավորությանը (տե՛ս **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 135):

նամակից, Տարոնում արդեն բյուզանդական զորավար էր նշանակված[23]: Կարելի է անել հետևություն, որ Աշոտ Գ-ին հաջողվել է հասնել նրան, որ բյուզանդական զորքը լքի Հայաստանի կենտրոնական շրջանները նախքան Հովհաննես Չմշկիկի զորքի 974 թ. արշավանքը, քանի որ եթե այդ զորքը գտնվեր Մանազկերտում, ապա հայկական բանակը, կենտրոնանալով Հարքում, կհայտնվեր երկու բյուզանդական բանակների միջև, ինչը մարտավարական առումով անհնարին էր: Մանազկերտը գրավելուց անմիջապես հետո բյուզանդական բանակի հեռանալը Ապահունիքից կարելի է բխեցնել այն իրողությունից, որ բյուզանդացիներն իսպառ կործանեցին Մանազկերտի պարիսպները, որը հակասում է քաղաքում ամրապնդվելու թեական նպատակադրմանը, ինչը, ընդհակառակը, ենթադրում էր պարիսպների ամրապնդում:

Վերադառնալով Տարոնի զավթմանը՝ նշենք, որ 968 թ. և հետագա տարիներին բյուզանդացիներին Տարոնի հարցը վերջնականապես լուծել չհաջողվեց, թեև Ասողիկի տեղեկությունից կարելի է հակառակ տպավորությունը ստանալ:

Այստեղ նաև հավելենք, որ Տարոնի զավթումը, փաստորեն, տեղի է ունեցել նախքան Հովհաննես Չմշկիկի գահակալությունը՝ Նիկեփոր Փոկաս կայսեր օրոք: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ վերջինիս այդպես էլ չի հաջողվել ավարտին հասցնել Տարոնի բռնակցումը Բյուզանդիային:

Հարկ է հստակեցնել Հովհաննես Չմշկիկի արշավանքին առնչվող կարևոր իրողություններ: Մատթեոս Ուռհայեցին այս արշավանքը ներկայացնում է 973 թ. դեպքերի նկարագրությունից հետո՝ առանց հստակ թվագրման[24], իսկ Հովհաննես Սկիլիցեսն այն թվագրում է 975 թվականով[25]: Կարևոր է այն, որ նշված պատմիչները Հովհաննես Չմշկիկի միայն մեկ արշավանք են հիշատակում, իսկ բյուզանդացի մեկ այլ հեղինակ՝ Լևոն սարկավագը՝ երկու: Ըստ վերջինի՝ Հովհաննես Չմշկիկի գլխավորած առաջին արշավանքը սկսվել է ամռանը և տեղի ունեցել Ամիդ-Մծբին-Էկբատան երթուղով[26]: Երկրորդ արշավանքը սկսվել է հաջորդ տարվա գարնանը, ընթացել Մամբիջ (Հալեպից շուրջ 60 կմ հյուսիս-արևելք)-Ապամեա-Դամասկոս-Բեյրութ-Տրիպոլիս երթուղով և ավարտվել օգոստոսին[27]: Մատթեոս Ուռհայեցու երկում մեջբերված՝ Աշոտ Գ-ին գրված Հովհաննես Չմշկիկի նամակում նախ խոսվում է Տարոնին առնչվող միայն մեկ արշավանքի մասին, որը տեղի է ունեցել սկզբում դեպի Ամիդ և Մծբին, իսկ այնուհետև՝ ապրիլին՝ դեպի Ասորիք, Փյունիկե և Պաղեստին: Նշված երկրներում արշավանքն ընթացել է Անտիոք-Հոմս-Բաալբեկ-Դամասկոս-Տիբերական ծով (Գա-

23 Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը՝ **Մ. Մելիք-Ադամյանի** և **Ն. Տեր-Միքայելյանի**, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ **Հ. Բարթիկյանի**, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 32:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 20-22:

25 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**, էջ 53-54:

26 Տե՛ս **Лев Диакон**, История, перевод **М. Копыленко**, М., изд. «Наука», 1988, էջ 84-85:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 86-87:

լիլեայի ծով)-Պտղոմիա-Բեյրութ-Բիբլոս-Տրիպոլիս-Անտիոք երթուղով և տևել 7 ամիս՝ մարտից սեպտեմբեր[28]: Ակնհայտ է, որ Հովհաննես Սկիլիցեսը խոսում է միայն 975 թ. արշավանքի մասին, իսկ Մատթեոս Ուռհայեցու երկում մեջբերված նամակը գրվել է բյուզանդական բանակի երկու արշավանքներից հետո՝ հավանաբար 975 թ. վերջին: Այնտեղ ներկայացված են երկու արշավանքներն էլ. առաջինը՝ խիստ համառոտ, իսկ երկրորդը՝ ընդարձակ շարադրանքով[29]: Քանի որ կայսրն անհրաժեշտ է համարել Աշոտ Գ-ին նամակով ներկայացնել երկու արշավանքների հանգամանքներն էլ, ակնհայտ է, որ նա հայոց թագավորին հանդիպել է դրանցից առաջ: Հարկ է նշել, որ երկրորդ արշավանքի երթուղին սկսվել ու ավարտվել էր Անտիոքում, ինչը բացառում է Տարոնի դեպքերի 975 թ. տեղի ունենալը, քանի որ ռազմավարական առումով լիովին անիմաստ ու անտրամաբանական էր Անտիոքից արշավանք սկսելիս դեպի արևելք շարժվելն ու Տարոն հասնելը, ապա երկարատև ճանապարհով դեպի հարավ-արևմուտք ուղևորվելն ու նոր միայն Պաղեստին արշավելը: Այն, որ Հովհաննես Չմշկիկի բանակի երկրորդ արշավանքը տեղի է ունեցել 975 թ., հուշում է գիսաստղի հայտնվելը, որը հիշատակվում է Հովհաննես Սկիլիցեսի[30], Լևոն սարկավագի[31] և Ասողիկի[32] երկերում: Հովհաննես Սկիլիցեսն ու Ասողիկը այդ իրադարձությունը թվագրում են 975 թվականով. առաջինը՝ օգոստոսին, իսկ երկրորդը՝ «ի մուտս ամառնային եղանակին» (այսինքն՝ ամառվա ավարտին, ավելի ստույգ՝ օգոստոսին): Այսպիսով, կարելի է ամրագրել, որ Տարոնի շուրջ հայ-բյուզանդական բանակցությունները տեղի են ունեցել 974 թ.:

Մատթեոս Ուռհայեցին, պատմելով Հովհաննես Չմշկիկ կայսեր գլխավորությամբ բյուզանդական բանակի 974 թ. արշավանքի մասին, գրում է, որ կայսրը «յարձակեցաւ ի պատերազմ ի վերայ Տաճկաց և կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել», այսինքն՝ ցանկանում էր մուտք գործել հայոց թագավորություն[33]: Պատմիչը նկատի ունի Տարոնը և հավանաբար նաև Հայաստանի այլ շրջաններ[34]: Ասորիք արշավելու ճանապարհից շեղվելն ու Տարոն ուղևորվելը Վ. Իսկանյանն իրավացիորեն բացատրում է Տարոնին առնչվող վիճելի հարցերը լուծելու և այնտեղ Բյուզանդիայի իշխանությունն ամրա- պնդելու կայսեր ցանկութ-

28 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 24-32:

29 Հովհաննես Չմշկիկի արշավանքների մասին տե՛ս **Каптен Г.**, К вопросу о религиозном характере восточного похода Иоанна I Цимисхия, «Вестник» русской христианской гуманитарной академии, СПб, 2012, т. 13, вып. 4, էջ 43-50:

30 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**. առաջաբան, էջ 53:

31 Տե՛ս **Лев Диакон**, էջ 87:

32 Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

33 Տե՛ս **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., Հայպետհրատ, 1959, էջ 105:

34 Ըստ Վ. Ստեպանենկոյի՝ նրա էքսպանսիոնիստական (ծավալապաշտական) նպատակների ծիրում Տարոնից դեպի արևելք շարժվելն էր, որը խափանվեց Աշոտ Գ-ի շուրջ հայկական պետությունների միավորմամբ (տե՛ս **Степаненко В.**, Из истории Армяно-византийских отношений второй половины X-XI в. (к атрибуции монет Кюрикэ куропалата), «Античная древность и средние века», Свердловск, 1978, вып. 15, էջ 45):

յամբ[35]: Խնդիրն այն է, որ Աշոտ Գ-ն այնքան էլ հակված չէր ընդունելու տեղի ունեցածը և ամեն կերպ հակադրվում էր Բյուզանդիայի կայսերը: Ուստի պատահական չէ, որ կայսեր զորաշարժը դեպի արևելք առիթ դարձավ հայկական զորքի զորաշարժին դեպի արևմուտք. «Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն ու Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձեւացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու. և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար»[36]: Այս նույն տեղեկությունը հաղորդում է նաև Սմբատ սպարապետը, բայց «ամենայն տունն Սասանու» հատվածի փոխարեն գրված է «ամէն տուն Հայոց», իսկ այնուհետև՝ «եւ զօրք արքունի զոր էառ քաջ արքայն Աշոտ եւ բանակէր ամենայն քաջօքն ի Հարք գաւառին»[37]:

Ուսումնասիրողներն արդեն անդրադարձել են բերված անվանացանկի ժամանակավրեպությանը՝ ընդգծելով, որ, մասնավորապես, «թագաւորն Աղուանից Գուրգէն», որն Աշոտ Գ-ի որդին էր, 974 թ. դեռ թագավոր չէր հռչակվել, իսկ Աբասը Կարսի թագավոր է դարձել միայն 984 թ.[38]: Բ. Հարությունյանը ենթադրում է, որ այդ ժամանակ «Աբասը լոկ կարող էր գլխավորել Վանանդի թագավորության զինված ուժերը»[39]: Ավելին, ըստ հետազոտողի, դատելով Ասողիկի խիստ հստակ տեղեկություններից, Աշոտ Գ-ի օրոք թագավոր է հռչակվել միայն Մուշեղը Կարսում, ուստի մյուս թագավորների հիշատակությունը պարզապես սխալ է կամ խեղաթյուրված[40]: Իրականում, ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի, «....Աշոտ Գ-ն, իր հետ ունենալով Հայաստանի բոլոր երևելի իշխաններին .... կանգ առավ Հարք գավառում: Կայսրը իր հերթին եկավ և կանգ առավ Տարոնի Այծյաց բերդի դիմաց, այսինքն՝ ամեն մեկը կանգ առավ այնտեղ, որտեղ վերջանում էին իր տիրույթները»[41]: Սակայն հեղինակի տեսակետը ճիշտ է մասամբ, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, կայսեր բանակը Տարոն մտավ այն բանից հետո միայն, երբ Աշոտ Գ-ի պատվիրակների հետ պայմանավորվեց հաշտության հարցում, այսինքն՝ Տարոնի հարցն ամբողջությամբ լուծված չէր:

Այսպիսով՝ հարկ է արձանագրել, որ պատմագիտության մեջ Հովհաննես Չմշկիկի՝ 974 թ. դեպի Տարոն կատարած արշավանքի և նրա ու Աշոտ Գ-ի միջև տեղի ունեցած բանակցությունների ընթացքը խորությամբ լուսաբանված չէ: Ի-

35 Տես **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների պատմությունից, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ «Գիտական աշխատությունների ժողովածու», Եր., 1957, N 6, էջ 107:

36 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 22:

37 **Սմբատ սպարապետ**, էջ 9:

38 Տես, օրինակ, **Հարությունյան Բ.**, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1969, N 1, էջ 148-149:

39 Նույն տեղում, էջ 149:

40 Տե՛ս նույն տեղում:

41 **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 186:

ռականում սկզբում հայոց զորքի ճամբար են ժամանել կայսեր պատվիրակները, որոնք վերադառնալով կայսերը զեկուցել են Տարոնի սահմանին կազմ ու պատրաստ բանակած հայոց մեծաթիվ զորքի մասին: Այնուհետև Աշոտ Գ-ն կայսեր մոտ է ուղարկել Լևոն իմաստասերին, որի մասին մանրամասնորեն կխոսվի ստորև, և իշխան Ստատ Թոռնեցուն[42] եպիսկոպոսների ու վարդապետների հետ[43]: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե ամեն ինչ ընթացել է խաղաղ հունով, իսկ կայսրն էլ Հայաստանում որևէ ռազմական ձեռնարկ իրականացնելու նպատակ չի ունեցել: Սակայն պատմիչի հաջորդ վկայությամբ՝ Բյուզանդիայի կայսրը Տարոնից դեպի Հայաստանի խորքը ներխուժելու ծրագիր է ունեցել, քանի որ «Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա (իմա՛ Հարքում հավաքված հայոց զորագնդերի կողմը - Ա. Ե.) և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Չմշկանն. գնացին և յիշխանացն Հայոց զկնի հրեշտակացն Հոռոմոց՝ իմաստասէրն Լեւոն և Ստատ իշխանն Թոռնեցին և այլ եպիսկոպոսք և վարդապետք և արարին սէր և խաղաղութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և ընդ Աշոտոյ արքային Հայոց: Եւ գայր խաղայր թագաւորն Չմշկիկ ահագին բազմութեամբ և հասանէր ի Տարօն գաւառ Հայոց և իջեալ ի Մուշ առաջի Այծեաց բերդին. և յառաջին գիշերն բազում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետեւակ զօրացն Սասանու (իմա՛ Սասունի - Ա. Ե.) և եկին իշխանքն և վարդապետքն Հայոց առ թագաւորն Հոռոմոց և մատուցանեին առաջի նորա զթուղթն Վահանայ Հայոց կաթուղիկոսին[44]: Եւ թագաւորն առեալ ընկալաւ զնա և յոյժ մեծարեաց զթուղթն և զբերողն. և հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք և խնդրեց զօրս յԱշոտոյ գալ նմա յօգնականութիւն. և տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց և այր պատերազմողս իբրեւ տասն հազար, խնդրեաց կերակուրս, ռոճիկս. և զամենայնն տուեալ նմա Աշոտ»[45]: Պատմիչի կողմից դեպքերի ընթացքի նկարագրությունը հուշում է, որ կայսեր պատվիրակ-հետախույզները Հարքում բանակած հայոց զորքը դիտարկել են նախքան բյուզանդական բանակի՝ Տարոն մտնելը: Այն Տարոն է մտել միայն այն բանից հետո, երբ նախնական կարգով «սեր և խաղաղություն» է հաստատվել Բյուզանդիայի և Հայաստանի տիրակալների միջև: Պարզ է, որ «սեր և խաղաղություն» հաստատելու անհրաժեշտություն է առաջացել այն պատճառով, որ կայսեր նկրտումները Հայաստանի նկատմամբ այնքան էլ խաղաղ չեն եղել, և դա հայտնի է եղել հայոց թագավորին, որն էլ թա-

42 Մ. Չամչյանցը ճիշտ ձևը համարում է «Սմբատ»-ը (տե՛ս **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հատ. Բ, Վենետիկ, ի Ս. Ղազար, 1785, էջ 845): Իսկ Հ. Բարթիկյանը, թեև սկզբում նշում է, որ Մատթեոս Ուռհայեցու այլ ձեռագրերում բերվում է «Սմբատ» անվանաձևը, սակայն համարում է, որ «Ստատ»-ը «Եվստաթ» անվան աղավաղված տարբերակն է (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ **Հ. Բարթիկյանի**, Եր., «Հայաստան» հրատ., 1973, էջ 300, ծան. 47):

43 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 22:

44 Պատմիչի այս հիշատակությունը սխալ է, քանի որ Վահան կաթողիկոսը 970 թ. արդեն վախճանվել էր: Հովհաննես Չմշկիկի արշավանքի շրջանում աթոռակալում էր Խաչիկ Ա-ն (972-991 թթ.):

45 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 22:

գավորության ողջ զորքը գումարել և շարժվել է ընդառաջ: Կայսրը խաղաղության է ձգտել միայն այն բանից հետո, երբ նրա հետախույզները նրան հայտնել են հայկական 80 հազարանոց բանակի մասին: Բացի այդ՝ բյուզանդական զորքի՝ Տարոն մուտք գործելը այն բանից հետո միայն, երբ հաստատվել է «սեր և խաղաղություն», ցույց է տալիս, որ Տարոնի զավթումը տարիներ առաջ լուրջ լարվածություն էր ստեղծել հայ-բյուզանդական հարաբերություններում, որի պատճառով Աշոտ Գ-ն, բյուզանդական բանակի առաջխաղացման մասին իմանալով, ընդառաջ էր գնում հսկա բանակով, իսկ Հովհաննես Չմշկիկն էլ չէր համարձակվում մուտք գործել Տարոն՝ առանց հայոց թագավորի հետ խաղաղություն հաստատելու: Հայ-բյուզանդական խիստ լարված հարաբերությունների մասին է վկայում Ասորիք կատարած արշավանքից հետո հայոց Ղևոնդ վարդապետին կայսեր ուղարկած նամակը, որում մասնավորապես գրված էր. «....յորժամ եկիր առ մեզ ի յԱշոտոյ շահնշահէ և հոգիական զաւակէ մերմէ և դարձուցեր զամենայն սրտմտութիւնս ի նմանէ»[46]: Ըստ Հ. Բարթիկյանի սպառիչ տեսակետի՝ նույն անձն են Լևոն իմաստասերն ու Ղևոնդ վարդապետը, որին Հովհաննես Չմշկիկն իր նամակում Պանդալևոն է անվանում[47]: Սակայն այստեղ առավել էական է այն, որ երբ վարդապետը հանդիպել է կայսերը մինչև վերջինիս՝ Տարոն մտնելը, նրա հետ զրույցը վերացրել է Աշոտ Գ-ի նկատմամբ կայսեր ունեցած սրտմտությունը (զայրույթ, ցասում, վրեժխնդրություն[48]): Հավանաբար Տարոնի զավթումից հետո հայ-բյուզանդական հարաբերությունները վատթարացել էին, սակայն Աշոտ Գ-ն 974 թ. դրությամբ հակված էր հարթելու Բյուզանդիայի հետ հակամարտությունը: Չմշկիկն ինքն էլ հակված չէր հայոց թագավորի հետ հարաբերությունների սրմանը, քանի որ նրա հիմնական նպատակը Ասորիք և Պաղեստին արշավելն էր: Ուստի զորք խնդրեց և, ստանալով այն, սկսեց իր արշավանքները դեպի մահմեդական երկրամասեր[49]:

Այդքանից հետո էլ Տարոնում բյուզանդական բանակի համար ամեն ինչ հարթ չընթացավ, և սասունցիների հետևակ զորքը ծանր հարվածներ հասցրեց նրան Այծյաց բերդի մոտակայքում, որը, Հ. Բարթիկյանի ճշգրիտ դիտարկմամբ, ենթակա էր Աշոտ Գ-ին[50]: Ի վերջո եկան հայ պատգամաբերներն ու կայսերը հանձնեցին հայոց կաթողիկոսի նամակը, որը նա ընդունեց մեծարանքով և հայոց հետ «սիրո ուխտ» հաստատեց:

---

46 Նույն տեղում, էջ 34:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 486, ծան. 42:

48 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. երկրորդ (Հ-Ֆ), էջ 765:

49 Այստեղ անհրաժեշտաբար նշենք, որ, ըստ Հովհաննես Սկիլիցեսի, հայկական զորամիավորում կար բյուզանդական բանակի կազմում նաև 964 թ. Կիլիկիան նվաճելու նպատակով անձամբ Նիկեփոր Փոկաս կայսեր գլխավորած արշավանքի ժամանակ (տե՛ս **Հովհաննես Սկիլիցես.** առաջաբան, էջ 20): Հ. Բարթիկյանի դիպուկ դիտարկմամբ՝ հայկական զորամիավորման վերաբերյալ բյուզանդացի հեղինակի նշած «դաշնակից» բառը հուշում է, որ խոսքը ոչ թե Բյուզանդիայի հայկական զորաջոկատների մասին է, այլ Հայաստանից ստացված օգնական զինուժի (տե՛ս նույն տեղում, էջ 288, ծան. 115):

50 Տե՛ս նույն տեղում, էջ XXVI:

Պատմիչի հետագա տեղեկությունները որոշ չափով լույս են սփռում համաձայնության պայմանների վրա: Ակնհայտ է, որ Աշոտ Գ-ն ևս խուսափում էր բյուզանդացիների հետ հակամարտությունից, ինչի պատճառով կայսերը հանձնեց իբրև օգնություն խնդրած 10 հազար զինվոր[51] և, ինչպես պարզվում է ավելի ուշ Հովհաննես Չմշկիկի՝ Աշոտ Գ-ին ուղարկած նամակից, հանձն առավ բյուզանդացիներին հանձնել Մուշի մոտակայքում գտնվող Այծյաց բերդը («….զԱյծեաց բերդն որպէս յանձին կալար՝ չես տուեալ»[52]): Սակայն կայսրն ի վերջո հրաժարվեց Այծյաց բերդից. «....այժմ գրեցաք առ զօրաւարդ մեր, որ ոչ բերդն առնու և ոչ զցորեանն զոր պայմանեցեր[53], զի այժմ չեղեւ առ մեզ պէտք»[54]: Փաստորեն, Սասունը և Մուշին մերձակա Այծյաց բերդը մնացել էին հայոց թագավորության կազմում: Ավելին՝ կայսրը գրում էր նաև, որ «....և զվաստակոցդ քոց և զարմտեացդ զտանես զփոխարէնն ըստ սերմանեացն զամենայն բարի մի ըստ միոջէ»[55], ասել է՝ հայոց թագավորին տրվելու էր այդ հաղթանակներում ունեցած մեծ ներդրմանը համապատասխան բարիք, որի մանրամասն նկարագրությունը տալիս է Սմբատ սպարապետը: Նրա հաղորդման համաձայն՝ կայսրը «առաքէ զիշխանն Հայոց եւ զզօրս եւ զեպիսկոպոսս բազում զօրոք եւ պարգեւօք առ թագաւորն Աշոտ, եւ պարգեւս թագաւորին շատ զանձ ոսկի, արծաթ...»[56]: Խոսքը «դահեկան ԼՌ (30.000) և ծառայս ԲՌ (2000), ձի ԺՌ (10.000) և ջորի Ռ (1000)»[57]-ի մասին է:

Ըստ Ն. Ադոնցի՝ Սմբատ սպարապետը, որն օգտվել է Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններից, ձեռքի տակ ունեցել է նրա աշխատության ավելի ճշգրիտ օրինակ, որտեղ էլ նշված են եղել կայսեր նվերները հայոց թագավորին[58]: Այս առումով հետաքրքրական է նաև «Յայսմաւուրքի» տեղեկությունը, թե «.... [Չմշկիկը] յղեաց ԲՌ (իմա՛ 2 հազար - Ա. Ե.) տաճիկ ծառայս, և ԺՌ (իմա՛ 10 հազար - Ա. Ե.) ձիս և ջորիս Հայոց արքային Աշոտ, վասն զի Աշոտ թագաւորն տուեալ էր յօգնականութիւն նմա ՁՌ (80 հազար - Ա. Ե.) ձիաւորս և այլ բազում հետևակս»[59]: Վերջինս մասամբ կրկնում է Սմբատ սպարապետի տեղեկությունը, մասամբ էլ նորություններ է հաղորդում, ինչպես, օրինակ, Աշոտ Գ-ին կայսեր կողմից «տաճիկ» (արաբ) ծառաներ ուղարկելու մասին:

Կատարված քննությունը ցույց է տալիս, որ մինչև 974 թվականը Տարոնի կարգավիճակը Բյուզանդիայի կազմում ճշտված չէր, և դա՝ առաջին հերթին այն

51 Ըստ Սմբատ սպարապետի՝ այդ զորագնդի հրամանատարը Գեորգին էր (տե՛ս **Սմբատ սպարապետ**, էջ 9):

52 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 32:

53 Պատմիչի՝ հրատարակության համար հիմք դարձած ձեռագրում՝ «պոմանեցիր», որն աղավաղված է (տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1898, էջ 27, ծան. 4):

54 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 32:

55 Նույն տեղում:

56 **Սմբատ սպարապետ**, էջ 10:

57 Նույն տեղում, էջ 12:

58 Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հատ. Ե, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 369-370:

59 «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կոստանդնուպալիս, ի տպարանի Գրիգոր դպրի Մարսըվանեցւոյ, 1730, էջ եՃղ (590):

պատճառով, որ հայ-բյուզանդական հարաբերություններում Տարոնի զավթման պատճառով առաջացել էր լուրջ հակասություն, որի հարթումից հետո միայն՝ 975 թ., ինչպես դիպուկ նկատել է Գ. Գրիգորյանը, Դերջանի և Տարոնի հողերից բյուզանդացիներն առանձին վարչական միավոր (բանակաթեմ) ձևավորեցին[60]: Նույն պատճառով Հ. Բարթիկյանը հակված էր այն մտքին, որ 966-974 թթ. կայսրությունը Տարոնի իշխանությունը ժամանակավորապես թողել է բնիկ տերերին՝ Բագրատունի իշխաններին[61]:

Պետք է նշել նաև, որ Տարոնի իշխանների կողմից հայրենի գավառի փոխանակումը Բյուզանդիայում գտնվող կալվածքների հետ և պատվաստիճանների ստացումը խաբուսիկ էին, քանի որ հետագայում կայսրերը հետևողականորեն հրաժարվում էին այն հարգալից մոտեցումից, որ կար փոխանակման պահին: Պետք է հիշել, որ XI դ. երկրորդ կեսի բյուզանդական հայազգի գործիչ Կեկավմենոսի գրվածքներից մեկում կա մի խորհուրդ, որը բացահայտում է Բյուզանդիայի նման քաղաքականության բուն էությունը և կանխագուշակում այն, ինչ սպասվում էր Տարոնը կայսրությանը հանձնած Բագրատունի իշխաններին: Նա նշում է. «Եթե պատահի սեփական երկրում բերդեր ունենաս կամ գյուղեր, ...քեզ չմոլորեցնեն զանձերը կամ պաշտոնները, կայսրերի մեծ խոստումները և հանկարծ երկիրդ տաս կայսեր, փոխարենն ստանալու համար դրամ ու կալվածքներ՝ թեկուզ տվածիդ քառապատիկը: Պահպանիր քո երկիրը թեկուզև փոքրիկ ու չնչին, քանզի նախընտրելի է քեզ [կայսեր] ինքնիշխան բարեկամը լինել, քան ստրուկն ու հպատակը: Դու կայսեր և բոլորի մոտ այնքան ժամանակ հարգանք, պատիվ, գովք ու փառք կվայելես, քանի դու, երեխաները քո ու նրանց [երեխաները] երկրիդ տերն եք: Եթե զրկվես քո երկրից, տապալվես իշխանությունիցդ, ճիշտ է, սկզբնական շրջանում պիտի վայելես կայսեր սերը, բայց քիչ անց նա քեզ պիտի արհամարհի, նա քեզ բանի տեղ չի դնելու, և [այն ժամանակ] պիտի համոզվես, որ ստրուկ ես և ոչ բարեկամ»[62]: Գուցե Տարոնը Բյուզանդիային հանձնած իշխաններին բաժին հասած հենց նման ճակատագիրն էր պատճառը, որ նրանք կարճ ժամանակ անց միացան Վարդաս Սկլերոսի ապստամբությանը (976-979 թթ.) ընդդեմ Վասիլ Բ կայսեր (976-1025 թթ.)[63]: Ն. Ադոնցը իրավացիորեն կարծում է, որ նրանք միացել էին ապստամբությանը Տարոնը ետ ստանալու ակնկալիքով[64]: Կարելի է համոզված պնդել, որ, այդ փոխանակումից 10 տարի չանցած, Կեկավմենոսի մռայլ կանխագուշակությունն իրականություն էր դարձել:

60 Տե՛ս **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 151:
61 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես.** առաջաբան, էջ XLV:
62 Նույն տեղում, էջ XXIII: Տե՛ս նաև թարգմանության հեղինակ Հ. Բարթիկյանի հույժ կարևոր մեկնաբանությունը:
63 Տե՛ս **Ասողիկ**, էջ 763:
64 Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 293:

Փաստորեն, Տարոնի կորուստը տեղի է ունեցել Բյուզանդիայի ճնշման պայմաններում, երբ բյուզանդացիների և մահմեդականների հակամարտությունը Տարոնից հարավ ընկած շրջաններում այնքան էր ահագնացել, որ, հավանաբար նաև այդ պատճառով, նրա տերերը համաձայնեցին տարածքային փոխանակման. նրանք Տարոնը տիրոջ իրավունքով հանձնեցին Բյուզանդիային՝ փոխարենը ստանալով կալվածքներ կայսրությունում: Աշոտ Գ-ն չհամակերպվեց դրա հետ, ինչի հետևանքով սրվեցին հայ-բյուզանդական հարաբերությունները: Սակայն Հովհաննես Չմշկիկ կայսեր կառավարման շրջանում հայոց թագավորության և Բյուզանդիայի հարաբերությունները կարգավորվեցին, ավելին՝ բյուզանդական բանակին հայոց թագավորի ցուցաբերած օգնության շնորհիվ նույնիսկ ջերմացան: Բայց Տարոնն անդառնալիորեն կորսված էր հայոց թագավորության համար:

2. Կարսի թագավորության ստեղծումը

Աշոտ Գ-ի գահակալության առաջին՝ միասնական հայոց թագավորության հզորացման պատմափուլին հաջորդեց Բյուզանդիայից բխող լրջագույն մարտահրավերների շրջանը, երբ թագավորությունը տարածքային կորուստներ կրեց և սկսեց ճեղքեր տալ: Տարոնի կորստից հետո հայոց թագավորության մասնատման սկիզբը դրվեց Կարսի թագավորության ստեղծմամբ: Ցավոք, Կարսում առանձին թագավորության ստեղծման մասին սկզբնաղբյուրներում ուղղակի և մանրամասն տեղեկություններ չկան, և ուսումնասիրողների համար միակ աղբյուրային վկայությունը Ասողիկի հաղորդած տեղեկությունն է. «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիւր՝ ամս ԻԵ: Եւ Մուշեղ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարս» («Աբասից հետո 25 տարի թագավորեց նրա որդի Աշոտը, որ Շահնշահ էր կոչվում: Եվ նրա եղբայր Մուշեղը նրա օրոք թագավորեց Կարսում»)[65]: Պատմագիտական գրականության մեջ Կարսի թագավորության ստեղծումը մշտապես թվագրվել է 960-ական թթ. առաջին կեսով[66], հազվադեպ՝ նաև 960-ական թթ. վերջով[67]:

65 **Ասողիկ**, էջ 755:

66 **Լեոն**, **Թ. Հակոբյանը**, **Ռ. Մաթևոսյանը** և **Ա. Ութուջյանը** Կարսի թագավորության ստեղծումը թվագրում են **961 թվականով**, այսինքն՝ Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելուց անմիջապես հետո (տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. երկրորդ, Եր., «Հայաստան» հրատ., 1967, էջ 578, **Հակոբյան Թ.**, Անի մայրաքաղաք, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1988, էջ 22, **Մաթևոսյան Ռ.**, Վանանդը Բագրատունյաց թագավորական ոստանի մարզ (X դ. առաջին կես), «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1979, N 4, էջ 81, «Հայոց պատմություն», հատ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), բաժին II, «Հայաստանը զարգացած միջնադարում (IX դարի կես-XIV դարի սկիզբ)» (այսուհետև՝ «Հայոց պատմություն», հատ. II, գիրք Բ), Եր., «Զանգակ» հրատ., 2014, էջ 121), **Հ. Հարությունյանը՝ 962 թվականով** (տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 97), **Ս. Երեմյանը** և **Կ. Յուզբաշյանը՝ 963 թվականով** (տե՛ս **Երեմյան Ս.**, Կարսը IX-XI դարերում, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 95, նույնի Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1971, N 3, էջ 7, **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., «Наука», 1988, էջ 72, 75):

ՀԴՀ համահայկական կանոնադրություն, ԺԸ (ԺՇ) տարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

Սակայն պետք է փաստել, որ Ասողիկի տեղեկությունից հնարավոր չէ պարզել այդ իրադարձության ոչ միայն թվականը, այլ նաև հանգամանքները: Չնայած դրան՝ հետազոտողները երբեմն համարել են, որ Մուշեղն ապստամբել է եղբոր դեմ[68], և կամ, հիմք ընդունելով հայկական մանր ժամանակագրություններից մեկում հանդիպող «...Աշոտ ... զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր»[69] հիշատակությունը, համարել, որ հենց Աշոտ Գ-ն է նրան կարգել թագավոր Կարսում[70]:

Փաստորեն, Ասողիկի տեղեկությունից բխեցվել են նման իրարամերժ և հակասական տեսակետներ: Մինչդեռ այնտեղ չկա ոչ մի ակնարկ ապստամբության և Աշոտ Գ-ի՝ եղբոր թագավորությունը հարկադրաբար ճանաչելու մասին:

Հետազոտողները անուշադրության են մատնել հայկական և վրացական աղբյուրներում պահպանված կարևոր տեղեկությունները (կամ պարզապես անտեղյակ են եղել դրանց): Վերջիններս ընդհանրապես բացառում են Կարսի թագավորության ստեղծումը 960-ական թվականներին և այդ իրողության կապը Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելու հետ: Մասնավորապես հայկական ձեռագրերից մեկում («Պատմութիւն Ս. Կենսաբերին և սոսկալի Ս. Նշանին, թէ որպես բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կամրջաձորոյ») պահպանված հիշատակության համաձայն՝ «Մուշեղ .... թագաւորեալ ինն ամ, և սա մեռանի. և յետ սորա Աբաս թագաւորեալ ամս վեց....»[71]: Պարզվում է, որ Մուշեղը թագավորել է միայն 9 տարի, իսկ այն, որ Մուշեղից հետո Աբասը թագավորել է Կարսում 6 տարի, հայտնի է նաև Ասողիկից[72]: Բացի այդ՝ Փարսադան Գորգիջանիձեի «Վրաստանի պատմություն» երկասիրության մեջ պահպանվել է տեղեկություն Մուշեղի 10-ամյա գահակալության մասին[73]: Վրաց հեղինակը Բագրատունի թագավորների գահակալության տարիների վերաբերյալ հաղորդել է հայկական աղբյուրների հիշատակություններին համապատասխան տեղեկություններ՝ Աշոտ Գ՝ 25 տարի[74], Սմբատ Բ՝ 13 տարի[75] և այլն, ուստի նրա տեղեկության հենց այս հատվածն անուշադրության մատ-

67 Ս. Պալասանյանը և Հ. Աճառյանը Մուշեղի կողմից Կարսի թագավորության հռչակումը թվագրում են **968 թվականով** (տե՛ս **Պալասանեան Ս.**, Պատմութիւն Հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, տպարան Տ. Մ. Ռօտինեանցի, 1902, էջ 295, **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Եր., Պետական համալսարանի հրատ., 1946, էջ 462-463):

68 Տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 97:

69 «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հատ. II, կազմեց՝ **Վ. Ա. Հակոբյան**, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 501:

70 Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 152-153:

71 «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 548, տե՛ս նաև **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951, էջ 175:

72 Տե՛ս **Ասողիկ**, էջ 766:

73 Տե՛ս **Մելիքսեթ-բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթություններով յեվ հավելվածներով, հատ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Եր., հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 1936, էջ 97:

74 Հմմտ. **Ասողիկ**, էջ 755. «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիւր՝ ամս ԻԵ (25 - Ա.Ե.)»:

75 Հմմտ. **Ասողիկ**, էջ 760. «....մեռաւ թագաւորն Հայոց՝ աւրհնեալն Աշոտ՝ ի ՆԻԶ (426 թ.-977/978 թ.-Ա.Ե.) թուականին, եւ ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ որդի նորա ամս ԺԳ (13 - Ա.Ե.)»:

նելու կամ կասկածի ենթարկելու որևէ հիմք չկա: Փաստորեն, հայկական և վրացական երկու աղբյուրներ Մուշեղին վերագրում են 9-10 տարվա գահակալություն, իսկ մեկ տարվա տարբերությունը բացատրելի է այդ հիշատակություններում Մուշեղի գահակալությունն ըստ տարիների հաջորդականության (առաջին տարի, երկրորդ տարի և այդպես շարունակ) կամ տարեշրջաններով (1 լիարժեք տարի, 2 լիարժեք տարի և այլն) հաշվարկելու իրողությամբ: Նման դեպքեր հայտնի են: Օրինակ՝ Թովմա Արծրունին և Ասողիկը ընդունում են Աշոտ Ա-ի գահակալությունը հայոց 336 (887/888 թ.)-339 (890/891 թ.) թվականների ընթացքում[76], սակայն ըստ Թովմա Արծրունու՝ արքան գահակալել է 4[77], իսկ ըստ Ասողիկի՝ 5 տարի[78]: Փաստորեն, Թովմա Արծրունին Աշոտ Ա-ի գահակալությունը հաշվարկում է տարեշրջաններով (887-888 թթ.՝ 1 տարի, 888-889 թթ.՝ 1 տարի, 889-890 թթ.՝ 1 տարի, 890-891 թթ.՝ 1 տարի, ընդհանուր՝ 4 տարի), իսկ Ասողիկը՝ ըստ տարիների հաջորդականության (887 թ.՝ առաջին տարի, 888 թ.՝ երկրորդ տարի, 889 թ.՝ երրորդ տարի, 890 թ.՝ չորրորդ տարի, 891 թ.՝ հինգերորդ տարի):

Ասողիկի հավաստի տեղեկությամբ՝ Մուշեղը վախճանվել է հայոց 435 թվականին (984/985 թ.)[79]: Նրա մահվան 984 թվականից 9 կամ 10 տարի հետ գնալու դեպքում ստացվում է գահակալության սկզբնավորման 974 կամ 975 թվականը, որը կարևոր հետևություններ է առաջացնում, քանի որ համընկնում է Հովհաննես Չմշկիկի գլխավորությամբ դեպի արևելք Բյուզանդիայի զորքի արշավանքի ժամանակին, երբ, ամենայն հավանականությամբ, օգտվելով հայոց թագավորության ծանր վիճակից, մի շարք հայ ավատատերեր կարող էին հանդես բերել գահակալման ցանկություն: Այսպիսով՝ Հ. Հարությունյանի կարծիքը, ըստ որի՝ Բյուզանդիան է դրդել Մուշեղին թագավոր ինքնահռչակվելու, խիստ իրատեսական է: Պատահական չէ, որ Ասողիկն իր հիշատակություններում Մուշեղի նկատմամբ այնքան էլ բարեհաճ չէր՝ նրան հիշատակելով որպես ցանկասեր մեկի («Բայց Մուշեղ ոչ ունէր զերկիւղն Աստուծոյ ի մտի, վասն զի բազմաբոյծ բոզիւք կեայր նա»[80]), իսկ Սմբատ Բ-ն (978-990 թթ.) թշնամանքով էր լցված Մուշեղի նկատմամբ[81]:

Փաստորեն, Կարսի թագավորության հիմնադրումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել 975 թ., որից մինչև 984 թ. 10 տարի է (ըստ տարիների հաջորդականության) կամ 9 տարի (տարեշրջաններով): Այս առումով կարևոր է «Թագաւորք վերջինք Բագրատունիք» կոչվող ժամանակագրության հիշատակությունը, թե «.... Աշոտ .... զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր»[82], որը հուշում է, որ Աշոտ Գ-ն ստիպված է եղել ի վերջո ճանաչել եղբոր գահակա-

76 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», հատ. ԺԱ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 236-238, **Ասողիկ**, էջ 740-741:

77 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 238:

78 Տե՛ս **Ասողիկ**, էջ 741:

79 Տե՛ս նույն տեղում, էջ 766:

80 Նույն տեղում, էջ 761:

81 Տե՛ս նույն տեղում, էջ 760:

82 «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հատ. II, էջ 501:

լությունը՝ նրան հաստատելով հայոց թագավոր և նրա իշխանությանը հանձնելով Այրարատի՝ Շիրակից արևմուտք ընկած գավառները[83]:

3. Վասպուրականը և Բյուզանդիան

Մեր հետազոտություններից մեկում անդրադարձել ենք այն իրողությանը, որ Վասպուրականի թագավոր Գագիկը, որը հռչակվել էր նաև «Հայոց թագավոր», 920-ական թթ. վերջերին ստացել էր Աշոտ Երկաթին պատկանող շահնշահ տիտղոսը[84], ինչի պատճառով արաբական աղբյուրում հիշատակվում է որպես «Հայաստանի և Վրաստանի թագավոր» («մալիք Արմինիա վա Ջուրզան» [ملك ارمينية و جرزان])[85]: Այնուհետև իրադարձությունների ժամանակակից Անանիա Մոկացին հայոց պատմության այն փուլը, երբ զուգահեռաբար գահակալում էին Աբաս Բագրատունին (929-953 թթ.) և Գագիկ Արծրունին (908-943 թթ.), ներկայացնում է որպես «յաւուրս արի եւ քաջատոհմիկ հզաւրացն երկոցունց ինքնակայացն Հայոց թագաւորացն քրիստոսապսակեալ տեառնն Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի եւ հեզահամբոյր հզաւրի եւ մեծի Հայոց արքայի»[86], այսինքն՝ երկուսին էլ հիշատակում է որպես հայոց թագավոր: Նա Գագիկ Արծրունուն հայոց թագավոր է կոչում այլ պարագաներում ևս[87]: Իսկ հետագայում գրում է, որ Գագիկի որդի Գրիգոր Դերենիկն ամեն ինչով նման էր հորը, բայց նրան կոչում է միայն «Վասպուրականի թագավոր», իսկ միակ հայոց թագավորը Աբասն էր[88]:

Սակայն Վասպուրականի Գրիգոր Դերենիկի եղբայր Աբուսահլ Համազասպ թագավորի գահակալության շրջանում (959-969 թթ.[89]) իրավիճակը դարձյալ փոխվում է, և Բյուզանդիայի կայսր Նիկեփոր Փոկասի օրոք փորձ է արվում Վասպուրականի տերերի միջոցով դարձյալ պառակտում մտցնելու հայոց թագավորության մեջ: Այս խնդիրը նախկինում նման տեսանկյունից երբեք քննության չի առնվել: Այսպես՝ 960-ական թթ. սկզբին կայսրը Վասպուրական է ուղարկում Պանդալեոն քահանային[90], որը փորձում է շահել թագավորի վստա-

83 Տե՛ս **Еремян С.**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1971, N 3, էջ 4:

84 Տե՛ս **Yeghiazaryan A.**, Gagik Artsruni-«King of Armenia and Georgia», «Բանբեր հայագիտության», Եր., 2016, N 1, էջ 77-94:

85 Տե՛ս **Ibn Ẓāfir**, Akhbār al-duwal al-munqaṭiʿa, ǧ. 1, Irbid, 1999, էջ 63:

86 «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեանն տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն», «Մատենագիրք Հայոց», հատ. Ժ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 256:

87 Տե՛ս նույն տեղում, էջ 257-258:

88 Տե՛ս նույն տեղում, էջ 260:

89 Ասողիկից հայտնի է, որ նրա հայրը՝ Գրիգոր Դերենիկը, գահ էր բարձրացել 943 թ., գահակալել 17 տարի և վախճանվել հայոց 407 թվականին (958/959 թ.) (տե՛ս **Ասողիկ**, էջ 826): Ավելի հստակ՝ նրա գահակալության վերջին՝ 17-րդ տարին 959 թվականն էր: Աբուսահլ Համազասպի՝ 22 տարի գահակալած որդին՝ Աշոտը, վախճանվել էր հայոց 439 թ. (990/991 թ.) (տե՛ս նույն տեղում), ուստի ստացվում է, որ նրա գահակալությունը սկիզբ էր առել 969 թ.՝ ամենայն հավանականությամբ, հոր մահից անմիջապես հետո: Ակնհայտ է, որ Աբուսահլ Համազասպը թագավորել է 959-969 թթ.:

90 Տե՛ս **Գարեգին Ա. կաթողիկոս**, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 117-118:

հությունը՝ ձևացնելով, թե ծառայում է երկու տերերի՝ կայսերը և Վասպուրականի թագավորին: Նրան Աբուսահլ Համազասպը հայոց 414 թ. (965/966 թ.) ուղարկում է Կոստանդնուպոլիս: Թեև որոշ հետազոտողներ Պանդպլեոնի ուղևորության նպատակ են համարում ս. Պետրոսի և Պողոսի մասունքները Վասպուրական բերելը[91], սակայն հազիվ թե նպատակը դա լիներ, թեև ինչ-որ պահի նա, իրոք, սկսել է հետաքրքրվել սրբերի մասունքներով: Իր այցի մասին Պանդպլեոնը գրում է. «Յամս Նիկիփորայ տիեզերակալի կայսեր Յունաց.... եհաս ինձ տառապեալ Պանդպլեոն և ոչ ըստ արժանեացն քահանայի, ...ի հրամանէ երկրորդ տիեզերակալի տեառն իմոյ աւագ Աբուսահլի Համազասպայ՝ արքայից արքայի մեծ պետութեանս՝ տանս Հայոց, զնալ զճանապարհս ուղեւորութեան....Կոստանդնուպոլիս, ի ՆԺԴ (414 թ. - 965/966 թ.) թուականութեանս Հայոց....»[92]:

Այդ կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը կարծում է, որ Տարոնին տիրելու նախօրեին Բյուզանդիան իր խարդավանքների մեջ էր ներքաշել նաև Վասպուրականի թագավորին[93]:

Վ. Վարդանյանը համարում է, որ Վասպուրականի տերերը դեռ շարունակում էին հայոց թագավոր լինելու հավակնություններ ունենալ գոնե անվանապես[94]: Ուսումնասիրողը նկատում է, որ Բյուզանդիան ձգտում էր տիրանալու հայկական հողերին, իսկ դա հեշտացնելու համար նրան պետք է որ ցանկալի լիներ մեկ շահնշահի փոխարեն մի քանիսի լինելը[95]: Ի դեպ, նա գտնում է, որ ընդհանուր առմամբ Բագրատունիների և Արծրունիների թագավորությունների միջև հակադրություն չկար, այլ «կային լոկ հակասություններ, որոնք մասամբ պտտվում էին կայսրությանը թեր կամ դեմ լինելու սկզբունքների շուրջը»[96]:

Սակայն իրականում հակադրություն կար, այն էլ՝ ոչ միայն Բյուզանդիայի նկատմամբ վերաբերմունքի շուրջ: Գրիգոր Դերենիկից հետո նրա եղբայր Աբուսահլ Համազասպը հավանաբար Գագիկ Արծրունու օրինակով տոգորվել էր Հայաստանում գերակայության հասնելու մտքով, ինչից էլ օգտվել էր Բյուզանդիան՝ հայոց թագավորության մեջ երկպառակություն մտցնելու համար: Պանդպլեոնի պարագան միայն սկիզբն էր: Սակայն, ամենայն հավանականությամբ, թեև հայ, բայց քաղկեդոնիկ հոգևորական Պանդպլեոնի[97]՝ Վասպուրականի թագավորին

91 Տե՛ս **Շալջյան Ս.**, Վասպուրականի թագավորության պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1949, N 4, էջ 55, **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., Երևանի համալսարանի հրատ., 1969, էջ 176:

92 **Ալիշան Ղ.**, Հայապատում. պատմութիւն Հայոց, հատ. Բ, Վենետիկ - ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 122-123:

93 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1957, էջ 132:

94 Տե՛ս **Վարդանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 176:

95 Տե՛ս նույն տեղում, էջ 176-177:

96 Նույն տեղում, էջ 178:

97 974 թ. Աշոտ Գ-ի կողմից Հովհաննես Չմշկիկի մոտ որպես պատգամաբեր ուղարկված «Լևոն իմաստասերի» կամ «հայոց վարդապետ Ղևոնդի» և Պանդալևոնի նույնացումը Հ. Բարթիկյանի կողմից (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 486, ծան. 42) հուշում է, որ, ամենայն հավանականությամբ, այդ անձը նույնանում է Աբուսահլ Համազասպին ծառայող Պանդալեոնին:

«երկրորդ տիեզերական» (առաջինը նրա համար Բյուզանդիայի կայսրն էր) կամ «Հայոց մեծ պետության արքայից արքա» տիտղոսներով հիշատակելը հուշում է, որ Բյուզանդիայից Աբուսահլ Համազասպին որոշակի հույսեր էին ներշնչել Հայաստանում նրա գերակայությունը ճանաչելու ուղղությամբ: Նման գայթակղությանը Վասպուրականի հավակնոտ թագավորը չդիմացավ, ինչի վկայությունն է քաղկեդոնականությանը հարելու մեղադրանքով աթոռանկ արված Վահան կաթողիկոսին հյուրընկալելու և հովանավորելու նրա գործելաոճը[98], որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Բյուզանդիային ուղղված համագործակցության ակնարկ, ինչին էլ գործնականում ձգտում էր Նիկեփոր Փոկաս կայսրը: Դա ցույց է տալիս, որ իր հոր՝ Գագիկ Արծրունու օրինակով Աբուսահլ Համազասպն էլ էր փորձում իր գերակայությունը Հայաստանում ճանաչել տալ կայսրությանը: Թեև մեզ հայտնի չէ Աշոտ Գ-ի վերաբերմունքը Վասպուրականի տիրակալի արարքի նկատմամբ, սակայն կարճ ժամանակ անց հավանաբար Տարոնի զավթումը Բյուզանդիայի կողմից ցրել էր Վասպուրականի տերերի պատրանքները, ինչի պատճառով էլ Աբուսահլ Համազասպի որդիներից Ռշտունիքում թագավորող Սենեքերիմ Հովհաննեսն ու Անձևացիքում գահակալող Գուրգեն Խաչիկը զորքով միացել էին Աշոտ Գ-ի՝ Հարքում Բյուզանդիայի բանակի զորաշարժին ընդառաջ կազմակերպած զորահավաքին:

Իսկ այն, որ Պանդալեոնը, անվանապես երկու տերերի, իսկ գործնականում բացառապես Բյուզանդիայի շահերին ծառայելով, որպես միջնորդ էր հանդես գալիս հայ տիրակալների և Բյուզանդիայի միջև, պարզվում է Մատթեոս Ուռհայեցու մեջբերած՝ Պանդալևոնին ուղղված Հովհաննես Չմշկիկ կայսեր նամակից, որը ոչ այլ ոք է, եթե ոչ նույն Պանդալեոնը: Աբուսահլ Համազասպի մահից հետո այդ հոգևորականը միջնորդի դեր էր կատարում այս անգամ արդեն Աշոտ Գ-ի և Հովհաննես Չմշկիկի միջև, ընդ որում՝ այնքան ջանադրաբար, որ արժանացել էր կայսեր անձնական երախտագիտությանը:

Այս իրողությունը ցույց է տալիս, որ Նիկեփոր Փոկաս կայսրն արևելքում բյուզանդական զորքի առաջխաղացման պայմաններում դիվանագիտական ծավալուն ձեռնարկներ է իրականացրել՝ հայկական պետության ներսում մասնատման գործընթացը խորացնելու և հարդյունս՝ Հայաստանում բյուզանդական ծավալապաշտական հավակնությունների կենսագործման համար դյուրին ճանապարհ բացելու նպատակով:

4. Եկեղեցական տագնապի հանգուցալուծումը

Աբաս թագավորի գահակալության շրջանում երկրի դավանաբանական հիմնախնդիրները հիմնականում կարգավորվել էին, սակայն Արցախում և Սյու-

98 Տե՛ս **Ասողիկ**, էջ 756:

նիքում դրանք, թեկուզ սառեցվել, բայց պահպանվել էին: Մինչև 966 թ. հայոց կաթողիկոսն էր գործունյա և հայոց հոգևոր-դավանական միասնության ջատագով Անանիա Մոկացին: Ի սկզբանե պետք է նշել, որ, չնայած Անանիա Մոկացու խիստ հստակ թվականային հիշատակությանը, պատմագիտության մեջ ամրագրվել է, թե իբր նրա գահակալությունը ընդգրկել է 946-968 թթ.[99]: Ն. Ադոնցը Անանիա Մոկացու գահակալությունը թվագրել էր 943-968 թվականներով[100], թեև մեկ այլ պարագայում նշում է նրա աթոռակալման 943-965 թվականները[101]: Դժվար չէ տեսնել, որ առաջին դեպքում նշված թվերի միջակայքը կազմում է 25 տարի՝ Ասողիկի կողմից Անանիա Մոկացուն «հատկացվող» տարիներից ավելի, իսկ երկրորդ դեպքում՝ 22 տարի, թեև Անանիա Մոկացու աթոռակալման թվագրումն ընդհանուր առմամբ կասկածելի է: Վերջերս էլ Ա. Հակոբյանն Անանիա Մոկացու գահակալության շրջանը թվագրեց 941-967 թվականներով[102]:

Սակայն աղբյուրներում առկա տեղեկությունները հնարավորություն են տալիս հստակորեն թվագրելու Անանիա Մոկացու գահակալության շրջանը: Ըստ Ասողիկի՝ Անանիա Մոկացին վախճանվել է հայոց 414 թվականին (965/966 թ.)[103՝] 22 տարի գահակալելուց հետո[104]: Ասողիկը նրան ժամանակակից պատմիչ է, որը 940-ականների վերջին, երբ բյուզանդական բանակը գրավեց Կարինը (949 թ.), պատանի էր[105], հետևաբար 960-ականների կեսերին՝ արդեն հասուն մարդ: Սամվել Անեցին ևս նշում է, որ Անանիա Մոկացու աթոռակալության տևողությունը 22 տարի է, որից 5-ը՝ Աղթամարում, իսկ 17-ը՝ Արգինայում[106]: Ըստ նրա՝ Անանիա Մոկացին աթոռակալել է մինչև հայոց 414 թ. (965/966 թ.)[107]: Անանիա Մոկացու 22-ամյա աթոռակալության մասին հիշատակում են նաև Ստեփանոս Օրբելյանը և Կիրակոս Գանձակեցին[108]: Եթե հայոց 414 թվականը համարենք նրա աթոռակալության 22-րդ տարին, ապա առաջինը կլինի 392 (943/944 թ.)՝ ըստ տարեշրջանների, կամ 393 թվականը (944/945 թ.)՝ ըստ տարիների հաջորդականության հաշ-

99 Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատ. Ա, Կոստանդնուպոլիս, հրատ. **Վ.** եւ **Հ. Տէր-Ներսէսեան**, 1912, սյունակ 1085-1086: Մ. Օրմանյանին հետևել են այլ հեղինակներ ևս (տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 95, **Մաթևոսյան Կ.**, Անի (եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը), էջմիածին, 1997, էջ 11 և այլն):

100 Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հատ. Ե, էջ 238:

101 Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հատ. Բ, Եր., ԵՊՀ հրատ, 2006, էջ 322:

102 Տե՛ս **Յակոբեան Ա.**, Մատթէոս Ուռհայեցու վկայութիւնը 961 թուականին Անին մայրաքաղաք հռչակելու մասին (նոր աղբյուրագիտական քննություն), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIX, Եր., 2014, էջ 310:

103 Տե՛ս **Ասողիկ**, էջ 756:

104 Տե՛ս նույն տեղում, էջ 749:

105 Ասողիկը, խոսելով Աբասի գահակալությանն շրջանում գործունեություն ծավալած սրբակրոն հայրերի մասին, գրում է. «Ձոմանս ի սոցանէ ի ծերութեան իւրեանց՝ ի տղայութեան մերում տեսաք աչաւք մերովք՝ ճաշակելով ի քաղցր ճաշակաց բանից նոցա» (նույն տեղում, էջ 754):

106 Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, ժամանակագրութիւն (Ադամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ **Կ. Մաթևոսյանի**, Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 173: Հեղինակը սխալմամբ «Արգինա»-ի փոխարեն գրում է «Վարագ» (տե՛ս նույն տեղում, էջ 380, ծան. 182):

107 Տե՛ս նույն տեղում, էջ 173-175:

108 Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան, 1910, էջ 502, **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 85:

վելու դեպքում: Այստեղ, սակայն, հենքայինն այն է, որ անձամբ Անանիա Մոկացի կաթողիկոսն իր թղթերում սեփական աթոռակալության սկիզբը դնում է հայոց 390 թ. (5 ապրիլ, 941 թ. - 5 ապրիլ, 942 թ.)[109], իսկ հետո հավելում, որ Աբաս թագավորը վախճանվել է «յամն երեքտասաներորդ մերոյ (իմա՛ Անանիա կաթողիկոսի Ա. Ե.) նուաստ աթոռակալութեանս»[110]: Ասողիկից հայտնի է նաև Աբաս թագավորի վախճանի տարեթիվը՝ հայոց 402 թ. (2 ապրիլ, 953 թ. - 2 ապրիլ, 954 թ.)[111], ավելի որոշակի՝ 953 թ.: Ուստի նշենք, որ Անանիա Մոկացի կաթողիկոսի գահակալության վերոհիշյալ թվագրումների դեպքում (943 թ. կամ 946 թ.) նրա աթոռակալության 13-րդ տարին ոչ մի կերպ չի համապատասխանում Աբասի մահվան 953 թվականին: Իրականում 953 թվականն Անանիա Մոկացու գահակալության 13-րդ տարին է այն 941 թվականից հաշվելու պարագայում: Սակայն այդ դեպքում առաջանում է երկրորդ խնդիրը: Հայոց 390 թվականից (941/942 թ.) հաշվարկելով Անանիա Մոկացուն հատկացվող 22 տարիները՝ հայոց 414 թվականին (965/966 թ.), երբ, ըստ Ասողիկի և Սամվել Անեցու, նա վախճանվել է, ոչ մի կերպ հասնել չենք կարող: Անանիա Մոկացին հիշատակում է, որ ինքը Գագիկ Արծրունի թագավորի (908-943 թթ.) որդի Գրիգոր Դերենիկ թագավորի (943-959 թթ.) հրամանով սկսում է զբաղվել Աղվանից խոտորյալ հայրապետին դարձի բերելու գործով[112]: Ավելի ուշ Անանիա Մոկացին հայոց հոգևոր-դավանական միասնության ապահովման աշխատանքներն իրականացնում էր Շիրակից՝ արդեն Աբաս թագավորի հովանավորությամբ[113], ինչը հուշում է, որ կաթողիկոսը մինչև Գագիկի մահը գտնվել է Վասպուրականում, որտեղ հայոց հայրապետները նստում էին Հովհաննես Դրասխանակերտցուց սկսած, իսկ այնուհետև իր նստավայրը տեղափոխել է Շիրակ: Այս ամենի հիման վրա նախկինում ենթադրել էինք, որ կա՛մ Անանիա Մոկացի կաթողիկոսի մահվան թվականի հիշատակության մեջ կա վրիպակ, և նա իրականում մահացել է ոչ թե հայոց 414 թ., այլ 413 թ. (964/965 թ.)՝ աթոռակալելով 941/942-964 թթ., և կա՛մ, քանի որ Անանիա Մոկացին իր աթոռակալության առաջին հինգ տարիներն անցկացրել է Վասպուրականում, հաշվարկելով հայոց 390 թվականից (941/942 թ.), նրա տեղափոխվելը Այրարատ պետք է թվագրել 946 թվականով, իսկ աթոռակալության 22 տարիները՝ 946-968 թվականներով[114]:

Սակայն այժմ հակված ենք որոշակի շտկումներ կատարելու մեր տեսակետում: Մեզ առավել հավանական է թվում, որ Անանիա Մոկացու աթոռակալությունը ենթարկվել է երկակի հաշվարկի, որից էլ առաջացել է վերոհիշյալ թվականային անհամապատասխանությունը: Անձամբ Անանիա Մոկացին, փաստորեն, իր աթոռակալությունը հաշվարկել է 941 թվականից՝ Վասպուրականում գահ բարձ-

109 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 268, տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 275:
110 **Անանիա Մոկացի**, էջ 268:
111 Տե՛ս **Ասողիկ**, էջ 755:
112 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258:
113 Տե՛ս նույն տեղում, էջ 259:
114 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աբաս Բագրատունի: Թագավոր հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 92:

ռանալուց սկսած, որը նրա աթոռակալության առաջին տարին է, քանի որ 953 թվականը 13-րդ տարին է: Այդ պարագայում նրա գահակալության հինգերորդ տարին, երբ նա տեղափոխվել է Այրարատ, 945 թվականն է: Քանի որ Ասողիկի հիշատակած՝ Անանիա Մոկացու մահվան հայոց 414 թվականը (965/966 թ.) կասկածելու հիմքեր չունենք այն պարզ պատճառով, որ պատմիչը կաթողիկոսի ժամանակակիցն է և ընդհանրապես հաղորդում է վստահելի տեղեկություններ, ստացվում է, որ Վասպուրականում գահ բարձրանալուց հետո մինչև 966 թ. նա գահակալել է 26 տարի: Ինչ վերաբերում է Ասողիկի նշած՝ Անանիա Մոկացու գահակալության 22 տարիներին, ապա ակնհայտ է, որ հաշվարկը կատարվել է Այրարատում հաստատվելու 945 թվականից սկսած (առաջին տարի), որով 966 թվականը դարձել է 22-րդ տարի: Այստեղ նաև հարկ է շեշտել, որ 945 թվականը մի կողմից նրա՝ Աղթամարում աթոռակալելու 5-րդ տարին է, իսկ մյուս կողմից՝ Այրարատում աթոռակալելու առաջին տարին: Այսպիսով՝ արձանագրենք, որ Անանիա Մոկացին վախճանվել է 966 թ. տարեսկզբին, քանի որ նրա մահվան հայոց 414 թվականը սկսվել էր 965 թ. մարտին և ավարտվել 966 թ. մարտին:

Աշոտ Գ-ի օրոք Անանիա Մոկացին շարունակեց իր անդուլ ջանքերը՝ Սյունիքում և Հայոց արևելից կողմերում քաղկեդոնական օջախներն արմատախիլ անելու ուղղությամբ: Դեռևս 940-ական թթ. կեսերին Սյունիքում ստեղծվել էր վտանգավոր իրավիճակ: Սյունյաց եպիսկոպոս Հակոբը (918-958/959 թթ.), որի մասին սպառիչ տեղեկություններ է հաղորդում Անանիա Մոկացին («զգլուխն եպիսկոպոսաց տանն Հայոց, որ զմետրապալտութեանն ընկալեալ էր պատիվ եւ նստէր յաշխարհին Սիւնեաց, որում անունն Յակոբ ճանաչիւր, ի զարմէ տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի»[115]), մեռոնի համար այլևս հայոց կաթողիկոսի մոտ չէր գնում՝ պատճառ բերելով կաթողիկոսարանի անընդհատ տեղափոխությունները, ճանապարհի հեռավորությունը և նպատակահարմար գտնելով նշված նպատակներով դիմել Աղվանից (Հայոց արևելից կողմերի) կաթողիկոս Սահակին (928-949 թթ.)[116]: Իսկ 930-940-ական թթ. Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը նույնիսկ հրաժարվեց հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելուց՝ պատրաստակամություն հայտնելով ընդունելու ընտրությունների արդյունքները[117]: Մ. Օրմանյանի դիպուկ դիտարկմամբ՝ խնդիրն այն էր, որ հայոց կաթողիկոսները՝ Հովհաննես Դրասխանակերտցուց մինչև Անանիա Մոկացին, գտնվում էին Վասպուրականում և օգտվում նրա թագավորների հովանավորությունից, ինչն ազդում էր Վասպուրականի տերերի նույնիսկ անուղղակի ազդեցությունը չհանդուրժող Սյունյաց տերերի վրա[118]: Խնդիրը կարգավորելու նպատակով 946 թ. Անանիա Մոկացին մեկնեց Ս-

115 **Անանիա Մոկացի**, էջ 256:
116 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 274-275:
117 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258:
118 Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., սյունակ 1088:

յունիք և հյուրընկալվեց Սյունյաց Սմբատ և Բաղաց Ջվանշեր[119] իշխանների կողմից: Այդ պահին Հակոբ եպիսկոպոսը կաթողիկոսի ներկայությամբ ու Սյունյաց Սմբատ և Բաղաց Ջվանշեր իշխանների ահից ընդունեց իր մեղքն ու կաթողիկոսից ներում ստացավ[120]: Համարելով խնդիրը լուծված՝ կաթողիկոսը մեկնեց Կարս, քանի որ լուր ստացավ թագուհու մահվան մասին[121]: Բայց Հակոբ եպիսկոպոսի մեղայականը կեղծ էր[122]: 949 թ. Անանիա Մոկացին դարձյալ Սյունիքում էր, քանի որ Հակոբ եպիսկոպոսը շարունակում էր իր հին ընթացքը: Նա ապաստանել էր Բաղքի Ջվանշեր իշխանի Կապան ամրոցում՝ ստանալով իշխանի լիակատար աջակցությունը: Նզովելով նրանց՝ կաթողիկոսը վերադարձավ Շիրակ[123]: Ըստ Սյունյաց պատմիչի՝ Անանիա Մոկացին «իբրև ետես զայն.... բազում աւուրս օթեալ անդր. և յոլով թղթովք և պատգամաւորօք հայցէր ի դուրս զՅակոբ ի ձեռացն Ջևանշիրի»[124], բայց անօգուտ, քանի որ իշխանը Սյունյաց եպիսկոպոսին չհանձնեց կաթողիկոսի ձեռքը: Քանի որ ձմեռ էր, կաթողիկոսը չկարողացավ երկար մնալ Կապանի պատերի տակ և հավանաբար իր տրամադրության տակ եղած զորքով[125] ավերակի վերածեց շրջակայքը («աւերեաց զտեղին և քանդեաց....») և, նզովելով ու բանադրելով խոտորյալներին, հեռացավ[126]: Պատմիչը փորձում է հավատացնել, որ Հակոբ եպիսկոպոսին հանիրավի վատաբանել էին, ուստի նա, ապաստանելով Կապանում, սպասում էր՝ «մինչև անցանէ բարկութիւն Տեառն: Քանզի գիտէր զանիրաւաբարձ բարդումն պէսպէս բասրանացն[127] որ զօդեալ էին ի վերայ ինքեան....»[128]: Վերադառնալով կաթողիկոսը սկսեց փորձեր կատարել հնազանդեցնելու Աղվանից Գագիկ կաթողիկոսին (949-959 թթ.)[129], որին 949 թ.

119 Ստեփանոս Օրբելյանը սրան կոչում է Ձևանշեր:

120 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258, տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 276:

121 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258-259:

122 Տե՛ս նույն տեղում, էջ 259, տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 277:

123 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 267-268:

124 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 283:

125 Այլապես անհասկանալի է մնում այն, թե ինչու էին Կապանի Ջվանշեր իշխանն ու Հակոբ եպիսկոպոսը ապաստանել Բաղքի Կապան ամրոցում, իսկ կաթողիկոսն էլ շրջափակել էր նրանց և պահանջում էր հանձնել Հակոբ եպիսկոպոսին:

126 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 282-283:

127 Թերևս՝ բամբասանացն:

128 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 282-283:

129 Ըստ Մովսես Դասխուրանցու և Կիրակոս Գանձակեցու՝ Գագիկ կաթողիկոսն իշխել է 14 տարի, ըստ որում՝ նրա գահակալության չորրորդ տարին համապատասխանել է հայոց 400 թվականին (951/952 թ.) (տես **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ **Վ. Առաքելյանի**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 346, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 198): Ստացվում է, որ նա աթոռակալել է մինչև 961 թ., ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ նա մահացել է Հակոբ եպիսկոպոսի հետ նույն տարում, ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ հայոց 407 թ. (958/959 թ.): Դա է փաստում նաև այն իրողությունը, որ Հակոբի և Գագիկի մահից հետո Սյունիքից Աղվանից նոր կաթողիկոս ձեռնադրելու նպատակով Արցախ մեկնելիս «գուժկան հասանի ի թագաւորէն Վասպուրականի և Արծրունի Գրիգոր կոչեցեալ եթէ վախճանեալ՝ մնա դին նորայ քեզ» (**Ստեփանոս Օրբելյան**, էջ 285-286), որից կարելի է բխեցնել, որ այդ դեպքը տեղի է ունեցել Վասպուրականի Գրիգոր Դերենիկ թագավորի մահվան տարում՝ հայոց 407 թ. (958/959 թ.): Մնում է ենթադրել, որ Գագիկ կաթողիկոսի գահակալության 14 տարիների մեջ ընդգրկված են նաև այն տարիները, երբ նա աթոռակալում էր առանց Ամենայն հայոց կաթողիկոսի համաձայնության՝ «անկատար օծմամբ» (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 277): Ըստ Անանիա Մոկացու՝ խոսքը «թերակատար ձեռնադրության» մասին է, քանի որ նա ձեռնադրվել էր ոչ հայոց հայրապետի կողմից (տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 260):

ինքն էր ձեռնադրել[130], բայց ապարդյուն: Հավանաբար Հակոբ եպիսկոպոսի արարքները հրահրելու մեջ նա կասկածում էր հենց Աղվանից կաթողիկոսին: Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունը հաստատում է դա: Ըստ նրա՝ «.... Գագիկ .... առաւել համարձակեալ էր ի սէր միաբանութեան ընդ Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի»[131]: Այդ ամենը տեղի ունեցավ 949 թ.: Դրանից հետո նա գործնական ջանքեր չգործադրեց ապստամբներին հնազանդեցնելու համար և «միայն աղօթիւք խնդրէր յԱստուծոյ զելս իրին»[132], ասել է՝ իրավիճակի հանգուցալուծման համար հույսը դնում էր Աստծո վրա:

Իսկ հայոց 407 թ. (958/959 թ.) մահացան թե՛ Գագիկ կաթողիկոսը և թե՛ Հակոբ եպիսկոպոսը[133]: Ըստ Սյունյաց պատմիչի՝ Գագիկ կաթողիկոսը դրժել էր ուխտը և ապստամբել կաթողիկոսի դեմ, ուստի Անանիա Մոկացին համարեց, որ նրանց երկուսի մահը իր աղոթքների հետևանքն էր[134], որով «....ամենայն եղծումն եւ ապականութիւն քայքայեցաւ, եւ առաքինութիւն եւ շինութիւն եւ խաղաղութիւն զտեղի խոփաբերեաց....: ....Եւ զբարս քաղցունց տէր տնկեաց ի սիրտս իշխանաց»[135]: Դրանից հետո միայն Անանիա Մոկացին կարողացավ լուծել խնդիրները Բաղքում: 959 թ., չնայած ձմեռային եղանակին և ծեր հասակին, կաթողիկոսը շտապ մեկնեց Սյունիք՝ կանխելու անցանկալի զարգացումները: Կապան ամրոցի դռներն այս անգամ բացվեցին նրա առաջ: Ջվանշեր իշխանը ընտանյոք և ազգոք մեղա եկավ, որին կաթողիկոսը հավատաց և Սյունյաց եպիսկոպոս կարգեց նրա որդի Վահանին[136]: Ստեփանոս Օրբելյանը տեղեկացնում է, որ Բաղաց Ջագիկ իշխանն ուներ երկու որդի՝ Ջվանշերը և Վահանը, որոնցից երկրորդը վանք կառուցեց և իր անունով այն կոչեց Վահանավանք, որի նավակատիքը տեղի ունեցավ հայոց 360 թ. (911-912 թ.)՝ հայոց Սմբատ Ա թագավորի օրոք (891-914 թթ.): Հայտնի է, որ Ջագիկ իշխանն իր որդի Ջվանշերի հետ մասնակցել է Տաթևի վանքի մայր տաճարի նավակատիքին, որ տեղի է ունեցել 906 թ.[137]: Ջագիկին հաջորդել է որդին՝ Ջվանշերը, «որ և պայազատէր զտէրութիւն նորա (իմա՛ Ջագիկի - Ա. Ե.) .... բազում ժամանակօք»[138], այսինքն՝ իշխել է տևական ժամանակ: Այնուհետև պատմիչը հավելում է, որ Վահանավանքի հիմնադիր Վահանից «յետոյ միւս Վահան՝ եղբօրորդի սորայ, այսինքն Ջևանշէրի որդի, ... եղև առաջնորդ սուրբ ուխտին (իմա՛ Վահանավանքի - Ա. Ե.): .... [նա] յետոյ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց որ զկնի Տեառն Յակոբայ. և

Հավանական է նաև այն, որ Գագիկ կաթողիկոսը գահակալել է միայն 10 տարի, ինչպես նշում է Մխիթար Գոշը (տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Յաւելուած Բ, էջ 351): Այդ դեպքում նրա գահակալությունն ընդգրկում է 949-959 թթ.:

130 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 261-262:

131 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 274:

132 Նույն տեղում, էջ 283:

133 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 269:

134 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 283-284:

135 **Անանիա Մոկացի**, էջ 269:

136 Տե՛ս նույն տեղում:

137 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 221-234:

138 Նույն տեղում, էջ 200:

անտի յեւս ի ծայրագոյն փառս՝ ի կաթողիկոսութիւն Հայոց, որ զկնի Տեառն Անանիայի Մոկացւոյն»[139]: Անանիա Մոկացին հստակ նշում է, որ եպիսկոպոս է ձեռնադրել Բաղքում 959 թ. դրությամբ իշխող Ջվանշերի որդուն. «....տեսեալ զեղջ արտասուացն՝ աւրինէաք ապա զինքն (իմա՛ Բաղաց իշխան Ջվանշերին - Ա. Ե.) եւ զտուն իւր, եւ ձեռնադրէաք եպիսկոպոս աշխարհին զորդի նորին զիսաչակրաւն եւ զսրբասնունդ տէր Վահան»[140]: Հ. Ութմազյանը կարծում էր, որ Ձագիկից Բաղաց իշխանության անցումը Ջվանշերին տեղի է ունեցել մինչև 911 թ., քանի որ 911 թ. դրությամբ, երբ կառուցվեց Վահանավանքը, Բաղքի իշխանն արդեն Ջվանշերն էր («....ի Բաղաց Ջեւանշէրի»)[141], ինչը, ինչպես կտեսնենք, չի նշանակում, որ Ձագիկ իշխանն արդեն վախճանվել էր: Ստեփանոս Օրբելյանից հայտնի է, որ Ձագիկը վախճանվել է 920-ական թթ. կեսերին, երբ Ատրպատականի ամիրա Յուսուֆի (901-927 թթ.) զորավարներից Նսրը ասպատակում էր Հայաստանը: Այդ ժամանակ է, որ նրան հաջորդել է որդին՝ Ջվանշերը[142]: Ահա հենց այս Ջվանշերի որդին էր Վահան եպիսկոպոսը, որին վիճակված էր դառնալ հայոց կաթողիկոս:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Անանիա Մոկացին Վահանավանքի մեծ ուխտի առաջնորդ Վահանին ձեռնադրել է եպիսկոպոս Սյունյաց իշխանների և հոգևոր դասի խնդրանքով՝ բոլորից ստանալով երդմնագիր, որ այլևս չեն շեղվելու ճիշտ ճանապարհից և չեն հետևելու Աղվանից հոգևոր առաջնորդին[143]: Ընդ որում, ձեռնարկը, այսինքն՝ գրավոր և կնքված երդմնագիրը, նախատեսում էր խիստ պահանջներ. «….և զյետկար մեծապայման վճիռն փակեցին ահագին և սոսկալի նզովիւք զի մի՛ ոք իշխեսցէ յեպիսկոպոսաց զՅակոբայն գործել կամ խոկալ կամ խորհիլ ոճիրս. և յիշխանաց զի մի՛ ոք իշխեսցէ այնպիսւոյն թեկնածել և օգնական կամ ջատագով լինել. և թէ յանդգնի ոք յեպիսկոպոսաց՝ փութապէս ի ձեռս տայցեն կաթողիկոսին Հայոց. և մի՛ լիցին դարան և ասպնջական նմա»[144]: Ըստ Անանիա Մոկացու՝ 959 թ. Վահան եպիսկոպոսը, Բաղաց իշխան Ջվանշերը և Սյունյաց իշխան Վասակն անվանական երդմնագրեր են շարադրել և փոխանցել կաթողիկոսին[145]:

Անանիա Մոկացին այնուհետև Սյունիքից մեկնել է Արցախ և կարգավորել գործերը[146]: Ըստ Սյունյաց պատմիչի՝ երբ Անանիա Մոկացին Սյունիքից հասել է Արցախ, ստիպված անմիջապես մեկնել է Վասպուրական, քանի որ «գուժական հասանի ի թագաւորէն Վասպուրականի և Արծրունի Գրիգոր կոչեցեալ եթէ վախճա-

139 Նույն տեղում, էջ 240-241:
140 **Անանիա Մոկացի**, էջ 269:
141 **Ութմազյան Հ.**, Սյունիքը IX-X դարերում, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1958, էջ 326-327:
142 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 197-200:
143 Տե՛ս նույն տեղում, էջ 284-285:
144 Նույն տեղում, էջ 285:
145 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 271-273:
146 Տե՛ս նույն տեղում, էջ 273:

նեալ՝ մնա դին նորայ քեզ»[147]: Նախկինում այս տեղեկությունը մեկնաբանվել է սխալ, և ուսումնասիրողներից ոմանք փորձել են մահացածին նույնացնել Վասպուրականի թագուհու հետ[148]: Իսկ Հ. Աճառյանը կարծիք է հայտնել, որ անորոշ է մնում՝ Գրիգորը գուժկա՞նն էր, թե՞ թագավորը[149]: Իրականում այդ տեղեկությունը նշանակում է, որ Վասպուրականի նոր թագավորը (իմա՛ Աբուսահլ Համազասպը [959-969 թթ.]) գուժկան է ուղարկել կաթողիկոսի ետևից՝ տեղեկացնելով, որ վախճանվել է նրա հայր Գրիգոր Դերենիկ Արծրունի թագավորը: Ըստ Անանիա Մոկացու՝ Գրիգոր Դերենիկի մահը վրա է հասել հայոց 407 թ. (958/959 թ.), երբ մահացել են նաև Հակոբ եպիսկոպոսը և Գագիկ կաթողիկոսը[150]:

Շուտով Հայոց արևելից կողմանց մեծամեծները՝ Աղվանից թագավոր Իշխանակը՝ Ատրներսեհի որդին, Աղվանից իշխան Սենեքերիմը, Խաչենի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմը, Գոռոզվա իշխան Վաչագանը, Արևելից իշխան Գուրգենը և այլք, կաթողիկոսի հետ պայմանավորվածության համաձայն, ընտրում են մի հոգևորականի՝ Դավիթ վանականին, և ձեռնադրման համար ուղարկում Շիրակ: Արքայի կամոք ձեռնադրությունը տեղի է ունենում[151]:

Անանիա Մոկացու նկարագրությունը ցույց է տալիս, որ հայոց թագավորության տարածքում հոգևոր-դավանական միասնության վերականգնման հիմնական ջատագովը հենց Աշոտ Գ Ողորմած թագավորն էր: Կաթողիկոսը պատմում է, որ երբ վերադարձավ Սյունիք ու Արցախ կատարած ուղևորությունից, արքան անչափ ուրախացավ, հատկապես երբ իմացավ դավանաբանական խնդիրների լուծման մասին: Անանիա Մոկացին իր հաջողությունները ներկայացնում է հարդյունս «շնորհաց հզաւրիս այսորիկ (իմա՛ Աշոտ Գ-ի - Ա. Ե.) և աղաւթից սրբոց»[152]: Այդպիսով վերջ դրվեց հայոց «եկեղեցու մեծ պատերազմին», և «եկեղեցու պատվական անդամները, որոնք պառակտվել[153] էին, վերստին Հայոց մեծ պատրիարքների գլխավորությամբ»[154] միավորվեցին: Ստեփանոս Օրբելյանը հավելում է, որ այդուհետ որևէ մեկը, լիներ Սյունյաց եպիսկոպոս թե Աղվանից արքեպիսկոպոս, եթե որևէ պատճառով որոշեր նույն կորստաբեր ճամփով ընթանալ և հեռանալ հայոց կաթողիկոսներից, որևէ հերձվածի (իմա՛ քաղկեդոնական դավանանքի) տուրք տար կամ անպատշաճ նորաձևություն կատարեր, Սուրբ Երրորդությունից կնզովվեր[155]: Պետք է նշել, որ բանը միայն դրանով

147 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 285-286:
148 Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., յունակ 1095:
149 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Եր., 1942, էջ 541-542:
150 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 269:
151 Տե՛ս նույն տեղում, էջ 273, **Ստեփանոս Օրբելյան**, էջ 286:
152 **Անանիա Մոկացի**, էջ 273:
153 Ըստ պատմիչի՝ «օծտեալ էին», որը թարգմանվել է «խոտորվել էին» (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ **Ա. Աբրահամյանի**, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 481, ծան. 824), սակայն առավել ճշգրիտ են «պառակտվել էին» կամ «ցրվել էին» ձևերը (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. երկրորդ (Հ-Ֆ), էջ 1026-1027):
154 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 286:
155 Տե՛ս նույն տեղում, էջ 286-287:

չավարտվեց. Սյունյաց եպիսկոպոսությունը ժամանակավորապես զրկվեց մետրոպոլիտության պատվից[156]:

Ստացվում է, որ Սյունիքում և Հայոց արևելից կողմերում առկա անջատողական միտումներն ու քաղկեդոնականության տարածման վտանգը չեզոքացվեցին 959 թ. դրությամբ:

Անանիա Մոկացու կողմից ձեռնադրված Վահանը Սյունիքի եպիսկոպոսն էր 6 տարի (960-966 թթ.)[157], որից հետո բազմեց հայոց կաթողիկոսական գահին: Վ. Ալեքսանյանը, հիմք ընդունելով Մատթեոս Ուռհայեցու այն տեղեկությունը, որ «....նստաւ յաթոռ հայրապետութեան տանն Հայոց տէր Վահան ի մեծն Արգինա հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագավորի»[158], եզրակացնում է, որ Անանիա Մոկացին, կանխազգալով մահը, որոշել էր իրենից հետո կաթողիկոս դարձնել ուժեղ հոգևորականի[159]: Մյուս կողմից, հայոց աշխարհիկ և հոգևոր մեծամեծները փորձել են Սյունիքի եպիսկոպոսին կաթողիկոս դարձնելով ամրապնդել հայոց հոգևոր-դավանական միասնականությունը, քանի որ Սյունիքն անջատողական հակումներ էր դրսևորում[160]: Ասողիկը տեղեկացնում է, որ Վահան Սյունեցին կաթողիկոսական գահին է բազմել հայոց 414 թ. վախճանված Անանիա Մոկացուց հետո[161]:

Ստեփանոս Օրբելյանի մի տեղեկության համաձայն՝ «....ապա հասանէ վախճան կաթողիկոսին Հայոց Տեառն Անանիայի. փոխեն զնա ի հանգիստ ի վանսն Արգինայի. և թագաւորն Աշոտ՝ որդին Սմբատայ, առնէ ժողով եպիսկոպոսաց և հարց սրբոց ի թագաւորանիստն Շիրակաւան. կոչէ և զՎահան ի Սիւնեաց. և հրամայէ ընտրել զմի ոք յեպիսկոպոսացն և կացուցանել յաթոռ հայրապետութեան Հայոց: ....որ և կեցեալ ամ մի՝ սկսաւ պատկերս բերել ի Վրաց և դնէր ի վերայ սեղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել, ըստ Հոռոմոց սահմանին կաւնիւք[162] զարդարել եւ առանց կաւնի[163] ոչ առնել պատարագ: Վասն որոյ կարծիս իմն առեալ ամենեցունց եթէ դաշնադիր է ընդ յոյնս. և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ նոցին, բողոք բարձին ընդ թագաւորն»[164]: Ըստ Ասողիկի. «Եւ ապա եկաց կաթողիկոս Վահանիկն[165] ի Բաղաց գաւառէ, որդի Ջուանշիրի իշխանի Բաղաց: Սա ընդ քաղկեդոնականս սիրելութիւն եւ հաճութիւն

156 Տե՛ս նույն տեղում, էջ 285:
157 Տե՛ս նույն տեղում, էջ 288:
158 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 38-40:
159 Տե՛ս **Ալեքսանյան Վ.**, Վահան Ա Սյունեցի կաթողիկոս Հայոց, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», Եր., 2019, N 2, էջ 43:
160 Տե՛ս նույն տեղում, էջ 44:
161 Տե՛ս **Ասողիկ**, էջ 756:
162 Հունարեն բառ, որը նշանակում է «[սրբա]պատկեր» (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, էջ 481, ծան. 824):
163 Տե՛ս նախորդ ծանոթությունը:
164 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 288-289: Այս տեղեկության մեջ կա առնվազն երկու փաստական սխալ՝ Աշոտ Գ-ն ներկայացված է որպես Սմբատի որդի, մինչդեռ նա Աբասի որդին էր, և որպես թագավորանիստ ներկայացված է Շիրակավանը, մինչդեռ Աշոտ Գ-ն նստում էր Անիում:
165 Ասողիկը, ի տարբերություն այլ պատմիչների, Վահան Սյունեցի կաթողիկոսին Վահանիկ է անվանում:

կամեցաւ առնել թղթովք»[166]: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ 1 տարի աթոռակալած Վահանը «դաշնադիր եղև ընդ Վիրս միաբան դաւանութեամբ»[167]:

Փաստորեն, Անանիա Մոկացի կաթողիկոսի մահից հետո նրա և սկզբում Աբաս, այնուհետև Աշոտ Գ թագավորների անդուլ ջանքերով կարգավորված հոգևոր կյանքը հայոց թագավորությունում կրկին ալեկոծվեց, և սանձահարված քաղկեդոնական շարժումը կրկին թափ առավ, այս անգամ արդեն՝ նոր կաթողիկոսի՝ Վահան Սյունեցու մասնակցությամբ: Վերջինիս գահակալության կարճատև՝ 2 տարին չբոլորած շրջանը[168] նշանավորվեց Բյուզանդիայի առաջխաղացմամբ, որով էլ Հայաստանում կրկին գլուխ բարձրացրին քաղկեդոնականները: Այս շարժումը Հայաստանում նոր չէր, սակայն այժմ, երբ Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությունը կլանում էր նորանոր հայկական երկրամասեր, այն կրկին աշխուժացել էր: Մյուս կողմից, հին հայկական երկրամաս Տայքը, որը շարունակում էր մնալ հայաբնակ, դարձել էր հայ քաղկեդոնականության օրրան: Այնտեղ ձևավորված տեղական իշխանությունն իր հզորության շրջանն էր ապրում Դավիթ կուրապաղատի օրոք (961-1000/1001 թթ.): Սա ևս մի կարևոր ազդակ էր հայ քաղկեդոնականների համար, որոնք այս անգամ փորձեցին Հայ առաքելական եկեղեցին շեղել իր պատմական ուղուց:

Այս առումով կարևոր է հստակեցնելը՝ հունակա՞ն, թե՞ վրացական եկեղեցուն էր տրվել նախապատվությունը: Պատահական չէ, որ եթե Ասողիկն ու Ստեփանոս Օրբելյանը խոսում են հունական (բյուզանդական) եկեղեցու հետ մերձենալու և հունական սրբապատկերներ ներմուծելու մասին, ապա Կիրակոս Գանձակեցին՝ վրաց եկեղեցու հետ դաշնադրության: Ճիշտը, սակայն, առաջին տարբերակն է, քանի որ տեղի ունեցածը քննարկելի է միմիայն բյուզանդական առաջխաղացման շրջանակներում:

Իրավիճակն այնքան արտառոց էր, որ 968 թ. Անիում տեղի ունեցավ մի ժողով, որտեղ, ըստ Ասողիկի, «ժողովեցին Հայոց կրոնավորները»[169]: Ժողովից առաջ Վահան Սյունեցին փախուստի էր դիմել և ապաստանել Վասպուրականում՝ ստանալով Աբուսահլ Համազասպ Արծրունի թագավորի աջակցությունը (959-969 թթ.): Ժողովում, որ վայելում էր Աշոտ Գ Ողորմածի հովանավորությունը, քննվեց Վահան կաթողիկոսի գործունեությունը, և ճշտվեց, որ նա համախոհ է քաղկեդոնական եկեղեցուն[170]: Նոր կաթողիկոս ընտրվեց Ստեփանոս Սևանցին[171], որը, դատելով Ստեփանոս Օրբելյանի «Ստեփաննոս յԱնի, և Վա-

166 **Ասողիկ**, էջ 756:
167 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 87:
168 Խնդիրն այն է, որ, ըստ Ստեփանոս Օրբելյանի, Վահան Սյունեցին սկսել է քաղկեդոնականությանը հարել 1 տարի աթոռակալելուց հետո (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 288-289), ուստի ստացվում է, որ նա կաթողիկոսական գահը զբաղեցրել է 1 տարուց ավելի:
169 **Ասողիկ**, էջ 756:
170 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 455:
171 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Ասողիկ**, էջ 756:

հան ի Վասպուրական՝ զամս երկու» տեղեկությունից[172], նստել է Անիում: Դրանով Աշոտ Գ Ողորմածին հաջողվել է «երկրի քաղաքական և հոգևոր իշխանությունը կարճ ժամանակով կենտրոնացնել Անիում»[173]:

Աբուսահլ Համազասպը Բյուզանդիայի հետ հարաբերությունների սերտացման պայմաններում Վահան Սյունեցուն ընդունեց և տեղավորեց Զորո վանքում, որն այլ կաթողիկոսների նստավայր էլ էր եղել 924-945 թթ.՝ Վասպուրականում Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի հաստատվելուց մինչև Անանիա Մոկացու՝ Այրարատ տեղափոխվելը[174], քանի որ կամենում էր կաթողիկոսական աթոռը դարձյալ Վասպուրական տեղափոխել[175]: Ս. Ճալջյանը համարում է, որ Վահանին հովանավորելը ցույց է տալիս, որ Վասպուրականի տերերի մեջ դեռ արթուն էր անկախ լինելու ցանկությունը, իսկ Աբուսահլ Համազասպն իրեն բավականաչափ ուժեղ էր զգում՝ Բագրատունիներից անկախ գործելու համար[176]:

Այստեղ հույժ կարևոր է նշելը, որ երբ Վահան Սյունեցին նզովվեց ժողովի կողմից և աթոռանկ եղավ, հեռացավ ոչ թե Բաղք, այլ Վասպուրական: Ամենայն հավանականությամբ, սյունեցիները հավատարիմ էին մնացել իրենց երդմանը և քաղկեդոնականությանը հարած Վահանին պարզապես չէին ընդունել: Ստեփանոս Օրբելյանն այս առիթով գրում է. «....ժողով սուրբ հարցն յԱնի, յորում քննեալ գտին համախոհ Վրաց զՎահան կաթողիկոս որ ի Բաղաց, և զի պատկեր եմոյծ յեկեղեցիս Հայոց, և յամենայն սեղանոյ բարձեալ էր խաչին պայծառութիւն և կաւնիւք զարդարեալ. որոշեցին զնա նզովիւք»[177]:

Այդ ժամանակ քաղկեդոնականության հանդեպ բարեհաճ Վահան Սյունեցու և նրան հովանավորող Աբուսահլ Համազասպ թագավորի վարքը դատապարտող հոգևորականների ժողովներ անցկացվեցին Տարոնում, Հաշտյանքում, Ծոփքում և Խորձյանում Հայաստանի արևմտյան շրջանների եպիսկոպոս Ստեփանոսի և նրա աջակիցներ Մովսես վարդապետի ու հոգևորական Բաբկեն Սյունեցու կողմից: Դրանից հետո նշված երեք անձինք մեկնեցին Վասպուրական: Վասպուրականի թագավորը սկզբում նրանց աքսորեց Աղթամար կղզի, բայց հետո Մովսեսին ու Բաբկենին ազատեց, և միայն Ստեփանոսը արգելափակվեց Կոտորաց բերդում, որտեղ և մահացավ[178]:

---

172 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 290:

173 **Մաթևոսյան Կ.**, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2008, N 3, էջ 6:

174 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 275:

175 Տե՛ս **Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Եր., «Մեկնարկ», 2016, էջ 203-204:

176 Տե՛ս **Ճալջյան Ս.**, նշվ. աշխ., էջ 55:

177 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 455:

178 Տե՛ս **Ասողիկ**, էջ 756: Հետազոտողներից ոմանք սրանից բխեցրել են, թե Կոտորաց բերդում վախճանվածը Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսն էր (տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., սյունակ 1120-1121, **Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, էջ 203, **Մաթևոսյան Կ.**, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, էջ 6 և այլք): Սակայն պետք է ընդունել Ասողիկի «[Ստեփանոսը] հովուէր զարեւմտեայ կողմն Հայոց» տեղեկության ճշմարտությունը և ընդունել, որ նա կաթողիկոսի անվանակիցն էր և Հայաստանի արևմտյան շրջանների եպիսկոպոսը:

Վահան Սյունեցու և Ստեփանոս Գ Սևանցու զուգահեռ 2-ամյա աթոռակալությունը անցավ փոխադարձ նզովքներով և դատապարտումով[179]: Դրանից հետո «Վահանիկն (իմա՛ Վահան Սյունեցի - Ա. Ե.) եւ Ստեփանոս ի միում ամի վախճանեցան եւ բարձաւ խռովութիւնն յաշխարհէս Հայոց»[180]:

Պետք է նշել, որ բոլորովին էլ զարմանալի չէր, որ Վահանը հարում էր քաղկեդոնականությանը: Ցավոք, անհասկանալի է մնում, թե նման մեկը ինչպես էր կարողացել բազմել Հայոց հայրապետական աթոռին: Արդեն համոզվեցինք, որ Անանիա Մոկացին Աբաս թագավորի գահակալության վերջում և Աշոտ Գ-ի գահակալության սկզբում՝ շուրջ 10 տարի (949-959 թթ.), չկարողացավ դարձի բերել ո՛չ նրա նախորդ Հակոբ եպիսկոպոսին և ո՛չ էլ վերջինիս հովանավոր Բաղքի Ջ-վանշեր իշխանին: Հավանաբար ընտրության վրա ազդել էր Անանիա Մոկացու կարծիքը, որը, Սյունիքի եպիսկոպոսին Հայոց հայրապետական աթոռի թեկնածու առաջադրելով, իրոք, հույս ուներ ամրապնդելու հոգևոր-դավանական միասնականությունը Հայաստանում:

Ինչպես տեսանք, ըստ Ասողիկի՝ Վահան Սյունեցին կաթողիկոսական գահին է բազմել հայոց 414 թ.՝ 966 թ.[181]: Ըստ Սամվել Անեցու՝ հայոց 415 թ. (966/967 թ.) Անանիա Մոկացուն փոխարինել է նրա հաջորդ Վահան կաթողիկոսը և աթոռակալել 1 տարի[182], իսկ Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսը՝ հայոց 416-417 թթ. (967-968 թթ.՝ 2 տարի)[183], որից հետո 1 տարի կաթողիկոսական աթոռը թափուր է մնացել[184]: Ի վերջո, հայոց 419 թ. (մարտ, 970 թ.- մարտ, 971 թ.) կաթողիկոսական գահին բազմում է Խաչիկ Ա-ն՝ գահակալելով 19 տարի[185]:

Վ. Ալեքսանյանը գտնում է, որ Վահան կաթողիկոսը աթոռակալել է 965-970 թթ., որից հետո հեռացել է Վասպուրական, որտեղ որպես հակաթոռ կաթողիկոս աթոռակալել է ևս 2 տարի՝ մինչև 972 թ.[186]: Նրա տեսակետի հիմքում Ստեփանոս Օրբելյանի և Մատթեոս Ուռհայեցու այն տեղեկությունն է, որ Վահանն աթոռակալել է 5 տարի[187]:

Եթե հավատարիմ մնանք աղբյուրների տեղեկություններին, ապա կարող ենք նշել, որ Վահան Սյունեցի կաթողիկոսը գահակալել է 1 տարի՝ նախքան քաղկեդոնականության նկատմամբ հակումներն ի ցույց դնելը, իսկ դրանց հայտնի դառնալուց հետո աթոռանկ է արվել՝ գահակալության 2 տարին չբոլորած: Այնուհետև նա հեռացել է Վասպուրական: Նրա փոխարեն Աշոտ Գ-ի հրամանով Անիում հավաքված եպիսկոպոսները 968 թ. կաթողիկոս են ընտրել Ստեփանոս

179 Տե՛ս նույն տեղում:
180 Նույն տեղում, էջ 757:
181 Տե՛ս նույն տեղում, էջ 756:
182 Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 175:
183 Տե՛ս նույն տեղում, էջ 176:
184 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 502, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 87:
185 Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 176:
186 Տե՛ս **Ալեքսանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 45:
187 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 502, **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 40:

Գ Սևանցուն[188]: Նրանք 2 տարի փոխադարձ նզովքներով անցկացրին և մահացան, ըստ Ասողիկի, նույն տարում: Այնուհետև 1 տարի հայրապետական աթոռը թափուր մնաց: Խաչիկ Ա կաթողիկոսը, ըստ Ասողիկի ճշմարտապատում վկայության, գահ է բարձրացել հայոց 421 թ. (28 մարտ, 972 թ.- 28 մարտ, 973 թ.) և աթոռակալել 19 տարի[189]:

Դատելով վերը ասվածից՝ հնարավոր է առաջարկել Անանիա Մոկացուց հետո աթոռակալած երեք կաթողիկոսների աթոռակալության հետևյալ ժամանակագրությունը: Վահան Սյունեցին Այրարատում և Վասպուրականում աթոռակալել է 5 տարի՝ 966-970 թթ., որից գրեթե 2-ը՝ 966-968 թթ.՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոս Արգինայում, իսկ մնացյալ 3-ը՝ 968-970 թթ.՝ իբրև հակաթոռ հայրապետ Վասպուրականում: Ստեփանոս Գ Սևանցին հայրապետական աթոռը զբաղեցրել է 2 տարի՝ 969-970 թթ.: 970 թ. նրանք երկուսն էլ վախճանվել են, որից հետո՝ 970-971 թթ.՝ 1 տարի, Հայոց հայրապետական աթոռը թափուր է մնացել: 972 թ. Անիում նոր կաթողիկոսի ընտրության նպատակով տեղի ունեցավ մի ժողով, որին մասնակցում էին թագավորության աշխարհիկ և հոգևոր տերերը. «....հրամանաւ թագաւորին Աշոտոյ, որ Ողորմածն կոչիւր, ժողովեալ ընտրելոց արանց և եպիսկոպոսաց սրբոց, կացուցանեն յաթոռն հայրապետական զերանելի այրն Աստուծոյ զտէր Խաչիկ»[190]: Նոր կաթողիկոսը՝ Խաչիկ Ա-ն (972-991 թթ.), Անանիա Մոկացի կաթողիկոսի քրոջորդին էր[191]: Նրան հաջողվեց խաղաղեցնել հոգևոր կյանքը թագավորության ներսում:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ 960-ական թթ. վերջին և 970-ական թթ. առաջին կեսին Բագրատունյաց թագավորությունը ծանր փորձությունների էր ենթարկվում: Իր գահակալության այս շրջափուլում Աշոտ Գ Ողորմածին վիճակվեց հանդես բերել խիզախություն և խելամտություն, քանի որ բյուզանդական ծավալապաշտությունը և երկրի ներսում առաջ եկած խլրտումները անհրաժեշտ էր կասեցնել՝ գործի դնելով ռազմական և դիվանագիտական բոլոր հնարավորությունները: Թեև Տարոնի զավթումը Բյուզանդիայի կողմից հնարավոր չեղավ կանխարգելել, սակայն Աշոտ Գ-ն վճռական ճիգով, մարտադաշտ դուրս բերելով 80 հազար զինվորներից բաղկացած մարտունակ բանակ, կասեցրեց Բյուզանդիայի հետագա առաջխաղացումը դեպի Հայաստանի կենտրոնական

188 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 289-290:

189 Տե՛ս **Ասողիկ,** էջ 758: Պատմիչը կաթողիկոսի մահվան մասին խոսելիս՝ գրում է. «....ի բարւոք ծերութեան փոխի յաշխարհէս եւ դնի յիւրում հանգստարանին ըստ հիւսիսոյ կուսէ եկեղեցւոյն Արգինայի, զոր ինքն շինեալ էր ի ՆԼԹ թուականին Հայոց. զոր ի նորուն ԺԹ ամն համարեալ՝ թուեսցուք զաւուրս հայրապետութեան նորա ամս Ի», այսինքն՝ այստեղ պատմիչն արդեն նրա գահակալության տարիների թիվը հասցնում է 20-ի՝ նրա մահը, փաստորեն, դնելով հայոց 439 թվականից (990/991 թ.) մեկ տարի անց՝ հայոց 440 թ. (991/992 թ.): Ավելին նրա հաջորդ կաթողիկոսի՝ Սարգիսի աթոռակալության սկիզբը պատմիչը համարում է հայոց 441 թվականը (992/993 թ.) (տե՛ս **Ասողիկ**, էջ 810):

190 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 87-88:

191 Տե՛ս **Ասողիկ**, էջ 758:

շրջանները: Արքայի միջամտությամբ հանգուցալուծվեցին նաև երկրի ներսում առկա քաղաքական խնդիրները և հոգևոր-դավանական ճգնաժամը:

Արման Ս. Եղիազարյան - 7 մենագրության և շուրջ 100 գիտական հոդվածի հեղինակ է: Զբաղվում է Բագրատունիների թագավորության պատմության և պատմական աշխարհագրության հիմնահարցերով: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի 7-11-րդ դարերի պատմությունը և պատմական աշխարհագրությունը, ինչպես նաև Սփյուռքի պատմությունը:

Էլեկտրոնային հասցե՝ Armanyeghiazaryan@ysu.am

Summary

THE AGE OF ASHOT III THE MERCIFUL

Part II: Struggle for preserving of the unity of Armenian kingdom

Arman S. Yeghiazaryan

Doctor of Sciences in History

Key words - Ashot the Merciful, reign, Byzantium, province, policy, annexation, military support, challenge, policy of expansionism, feudal lord.

The late 960s and the first half of the 970s became the most difficult and decisive stage of the reign of Ashot III the Merciful. The Armenian kingdom at the peak of its power was in great danger, since the Byzantine Empire at this stage showed ambitious plans for conquest in the East. The main goal of Byzantium was to conquer countries and territories, stretching from Cilicia to Palestine, and in its activities, on the one hand, it enjoyed the support of the armed forces of Bagratid Armenia, and on the other hand tried to conquer more new territories of Armenia and contribute to a split within the country.

Byzantine politics aimed at the conquest of Taron-Turuberan in the west of Great Armenia, the western areas of the Ayrarat province, and in the future, the Vaspurakan kingdom. Pursuing its policy of expansionism, Byzantium sought to maximize the problems between the Armenian local feudal lords and the central authority of the Bagratids, as well as the ambitions of some Armenian nobles. Unfortunately, the emperors were able to achieve their goals, which, on the one hand, reduced the territory of the kingdom of Armenian Bagratids, and on the other hand, the fragmentation of the united kingdom weakened its ability to resist, making it more vulnerable to neighbors.

Հին հայկական հանդես, ԵՊ (ՇԳ) գիտ. հանդես, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

The loss of Taron was the result of Byzantine pressure on the rulers of this region and occurred in the context of the aggravated Arab-Byzantine conflict. Under such conditions, the rulers of Taron were forced to cede their domains to Byzantium, in exchange receiving new possessions and honorary titles from the empire.

Through the efforts of the Byzantine court, the king of Vaspurakan also decided to confront Ashot III in church and confessional matters and sought to the dominate position in Armenia. But after the annexation of Taron, he abandoned his claims.

Ashot III did not conform with the current situation, as a result of which relations between the Armenian kingdom and Byzantium became tense. In the age of John Tzimiskes reign Armenian-Byzantine relations were settled, moreover, as a result of considerable military assistance from the Armenian king to the emperor of Byzantium, they even trmporarily acquired features of a military alliance.

Despite Byzantium succeeded in annexing Taron, but Ashot III managed to prevent its further advancement. But the empire was waiting for a convenient opportunity to achieve its goals.

As a result of Byzantine intervention in the affairs of the Armenian kingdom in 875, Mushegh, the ruler of the Kars fortress and the Vanand region, proclaimed himself king. Ashot III was forced to acknowledge the fact, recognizing the reign of his brother Mushegh in exchange for his submission to the Ani throne.

The spiritual life of the kingdom in the studied period was not calm either: the kingdom again faced the danger of the spread of Chalcedonism, but this challenge was neutralized.

Резюме

ЭПОХА АШОТА III МИЛОСТИВОГО

Часть II. Борьба за сохранение единства Армянского царства

Арман С. Егиазарян
Доктор ист. наук

Ключевые слова - Ашот Милостивый, царствование, Византия, провинция, политика, аннексия, военная поддержка, вызов, политика экспансионизма, феодал.

Конец 960-х и первая половина 970-х гг. стали наиболее трудным и решающим этапом правления Ашота III Милостивого. Армянское царство в зените своего могущества столкнулось с большой опасностью, так как Византийская империя на этом этапе истории проявляла амбициозные планы завоеваний на Востоке. Главная цель Византии состояла в завоевании стран и территорий,

простирающихся от Киликии до Палестины, и в своей деятельности она, с одной стороны, пользовалась поддержкой вооруженных сил Багратидской Армении, а с другой стороны, пыталась завоевать все новые территории Армении и способствовать расколу внутри страны.

Византийская политика нацелилась на завоевание Тарон-Туруберана на западе Великой Армении, западных провинций области Айрарат, а в перспективе и Васпураканского царства. Осуществляя свою политику экспансионизма, Византия стремилась максимально использовать проблемы во взаимоотношениях между местными армянскими феодалами и центральной властью Багратидов, а также амбиции некоторых армянских вельмож. К сожалению, императоры смогли достичь своих целей, что, с одной стороны, сократило территорию царства Армянских Багратидов, а с другой - раздробленность объединенного царства ослабила его способность сопротивления, сделав его более уязвимым для соседей.

Потеря Тарона стала результатом давления Византии на правителей этого региона и произошла в контексте обострения арабо-византийского конфликта. В таких условиях правители Тарона были вынуждены уступить свои земли Византии в обмен на новые земли и почетные звания от империи.

Усилиями византийского двора царь Васпуракана также решил противостоять Ашоту III в церковных и конфессиональных вопросах и стремился занять доминирующее положение в Армении. Но после аннексии Тарона он отказался от своих претензий.

Ашот III не смирился со сложившейся ситуацией, в результате чего отношения между Армянским царством и Византией стали напряженными. В эпоху правления Иоанна Цимисхия армяно-византийские отношения урегулировались, более того, благодаря значительной военной помощи со стороны армянского царя императору Византии, они даже временно приобрели черты военного союза.

Несмотря на то, что Византии удалось аннексировать Тарон, Ашоту III удалось предотвратить ее дальнейшее продвижение. Но империя ждала удобной возможности для достижения своих целей.

В 875 году в результате византийского вмешательства в дела Армянского царства Мушег, властитель крепости Карс и области Вананд, провозгласил себя царем. Ашот III был вынужден признать состоявшийся факт и одобрить царствование своего брата Мушега взамен на его подчинение Анийскому престолу.

Духовная жизнь царства в исследуемый период тоже была неспокойной: царство снова столкнулось с опасностью распространения халкидонства, но этот вызов удалось нейтрализовать.

REFERENCES

1. "Ayrarat. bnashkharh Hayastaneayts'", teghagreats' **H. Ghewond V. M. Alishan**, Venetik-S. Ghazar, 1890 **(In Armenian)**.
2. "Girk' vor koch'i Aysmawurk'", Kostandnupawlis, I tparani Grigor dpri Marsĕvanets'woy, 1730 **(In Armenian)**.
3. "Manr zhamanakagrut'yunner XIII-XVIII dd.", hat. II, kazmets' **V. Hakobyan**, Yer., Haykakan SSH GA hrat., 1956 **(In Armenian)**.
4. "Nor baṛgirk' haykazean lezui", hat. II, Yer., Yerevani hamalsarani hrat., 1981 **(In Armenian)**.
5. "Otar aghbyurnerĕ Hayastani yev hayeri masin", 10, "Byuzandakan aghbyurner", G, **Hovhannes Skilits'es**, t'argmanut'yun bnagrits', aṛajabanĕ yev tsanot'agrut'yunnerĕ` **H. Bart'ikyani**, Yer., Haykakan SSH GA hrat., 1979 **(In Armenian)**.
6. "Otar aghbyurnerĕ Hayastani yev hayeri masin", 11, "Arabakan aghbyurner", B, **Ibn al-Asir**, t'argmanut'yun bnagrits', aṛajaban yev tsanot'agrut'yunner` **A. Ter-Ghevondyani**, Yer., Haykakan SSH GA hrat., 1981 **(In Armenian)**.
7. "Otar aghbyurnerĕ Hayastani yev hayeri masin", 6, "Byuzandakan aghbyurner", B, **Kostandin Tsiranatsin**, t'argmanut'yun bnagrits', aṛajabanĕ yev tsanot'agrut'yunnerĕ` **H. Bart'ikyani**, Yer., Haykakan SSH GA hrat., 1970 **(In Armenian)**.
8. "Patmut'iwn nahangin Sisakan arareal Step'annosi Ōrbēlean ark'episkoposi Siwneats', T'iflis, Yelek'trasharzh tparan, 1910 **(In Armenian)**.
9. "Taregirk' Smbatay sparapeti", Venetik, S. Ghazar, 1956 **(In Armenian)**.
10. "Teaṛn **Ananiayi Hayots' kat'oghikosi** yaghags apstambut'eann tann Aghuanits'", "Matenagirk' Hayots'", hat. Zh., Zh. dar, Ant'ilias-Libanan, YePH hrat., 2009 **(In Armenian)**.
11. **Abrahamyan A.**, Drvagner hay azatagrakan mtk'i patmut'yan, girk' I, Yer., Haykakan SSṚ GA hrat., 1957 **(In Armenian)**.
12. **Adonts' N.**, Yerker, hat. II, Yer., YePH hrat., 2006 **(In Armenian)**.
13. **Adonts' N.**, Yerker, hat. V, Yer., YePH hrat., 2012 **(In Armenian)**.
14. **Achaṛyan H.**, Hayots' andznanunneri baṛaran, hat. A, Yer., Petakan hamalsarani hrat., 1942 **(In Armenian)**.
15. **Achaṛyan H.**, Hayots' andznanunneri baṛaran, hat. G, Yer., Petakan hamalsarani hrat., 1946 **(In Armenian)**.
16. **Alek'sanyan V.**, Vahan A Syunets'i kat'oghikos Hayots', "Banber Yerevani hamalsarani. Hayagitut'yun", Yer., 2019, N 2 **(In Armenian)**.
17. **Alishan Gh.**, Hayapatum. patmut'iwn Hayots', hat. B, Venetik - I vans S. Ghazaru, 1901 **(In Armenian)**.
18. **Ch'amch'eants' M.**, Patmut'iwn Hayots', hat. B, Venetik, I Surb Ghazar, 1784 **(In Armenian)**.
19. **Danielyan Ē.**, Taronĕ hay-byuzandakan haraberut'yunnerum (IX dari yerkrord kes - X dar), "Patmabanasirakan handes", Yer., 1978, N 1 **(In Armenian)**.
20. **Garegin A Kat'oghikos,** Yishatakarank' dzeṛagrats', hat. A (Ye darits' minch'ew 1250 t'.), Ant'ilias, tparan Kat'oghikosut'ean Hayots' Kilikioy, 1951 **(In Armenian)**.
21. **Grigoryan G.**, Taroni Bagratunineri feodalakan ishkhanut'yunĕ IX-X darerum, Yer., Haykakan SSH GA hrat., 1983 **(In Armenian)**.
22. **Hakobyan T'.**, Ani mayrak'aghak', Yer., Yerevani hamalsarani hrat., 1988 **(In Armenian)**.
23. **Harut'yunyan B.**, Artsrunyats' ishkhanakan ĕntanik'ĕ Hayots' patmut'yan mej, Yer., "Meknark", 2016 **(In Armenian)**.
24. **Harut'yunyan B.**, Syunyats' t'agavorut'yan himnadrman taret'ivĕ, "Banber Yerevani hamalsarani", Yer., 1969, N 1 **(In Armenian)**.

ՀԴ պատմական-հնագիտական հանդես, հատոր 2 (70), տարի 2020

25. **Harut‘yunyan H.**, Hayastanĕ IX-XI darerum, Yer., Hayastani petakan hratarakch‘ut‘yun, 1959 **(In Armenian)**.
26. **Ibn Ẓāfir**, Akhbār al-duwal al-munqaṭiʿa, ğ. 1, Irbid, 1999 **(In Arabic)**.
27. **Iskanyan V.**, Hay-byuzandakan k‘aghak‘akan haraberut‘yunneri patmut‘yunits‘, Kh. Abovyani anvan HPMI “Gitakan ashkhatut‘yunneri zhoghovatsu”, Yer., 1957, N 6 **(In Armenian)**.
28. **Jeremjan S.**, Prisojedinenije severo-zapadnyx oblastej Armenii k Vizantii v XI veke, “Lraber” has. git., Jer., 1971, N 3 **(In Russian)**.
29. **Juzbashyan K.**, Armjanskije gosudarstva epoxi Bagratidov I Vizantija IX-XI vv., M., “Nauka”, 1988 **(In Russian)**.
30. **Kapten G.**, K voprosu o religioznom xaraktere vostochnogo poxoda Ioanna I Cimisxija, “Vestnik” russkoj xristjanskoj gumanitarnoj akademii, 2012, t. 13, vyp. 4 **(In Russian)**.
31. **Kirakos Gandzakets‘i**, Patmut‘yun Hayots‘ (ashkhatasirut‘yamb K. A. Melik‘-Ōhanjanyani), Yer., Haykakan SSṚ GA hrat., 1961 **(In Armenian)**.
32. **Leo**, Yerkeri zhoghovatsu, hat. II, Yer., “Hayastan” hrat., 1967 **(In Armenian)**.
33. **Lev Diakon**, Istorija, perevod **M. Kopylenko**, M., izd. “Nauka”, 1988 **(In Russian)**.
34. **Mat‘evosyan K.**, Ani: yekeghets‘akan kyank‘ĕ yev dzeṛagrakan zhaṛangut‘yunĕ, Mayr At‘oṛ Surb Ējmiatsin, 1997 **(In Armenian)**.
35. **Mat‘evosyan K.**, Anin mayrak‘aghak‘ yev kat‘oghikosanist, “Patmabanasirakan handes”, Yer., 2008, N 3 **(In Armenian)**.
36. **Mat‘evosyan Ṛ.**, Bagratunyats‘ Hayastani petakan kaṛuts‘vatsk‘ĕ u varch‘akan kargĕ, Yer., Haykakan KhSH GA hrat., 1990 **(In Armenian)**.
37. **Mat‘evosyan Ṛ.**, Vanandĕ Bagratunyats‘ t‘agavorut‘yan vostani marz (Kh d. aṛajin kes), “Lraber” has. git., Yer., 1979, N 4 **(In Armenian)**.
38. **Matt‘ēos Uṛhayets‘i**, Zhamanakagrut‘iwn, Yer., Yerevani hamalsarani hrat., 1991 **(In Armenian)**.
39. **Melik‘set‘-bek L.**, Vrats‘ aghbyurnerĕ Hayastani yev hayeri masin, hat. II, Yer., hratarakch‘ut‘yun Melk‘onyan fondi, 1936 **(In Armenian)**.
40. **Movsēs Kaghankatuats‘i**, Patmut‘iwn Aghuanits‘ ashkharhi, k‘nnakan bnagirĕ yev neratsut‘yunĕ’ V. Aṛak‘elyani, Yer., Haykakan SSH GA hrat., 1983 **(In Armenian)**.
41. **Ormanean M.**, Azgapatum, Kostandnupolis, hrat. **V. yev H. Ter-Nersesyan**, 1912 **(In Armenian)**.
42. **Palasanean S.**, Patmut‘iwn Hayots‘, T‘iflis, tparan T. M. Ṛōtineants‘i, 1902 **(In Armenian)**.
43. **Samuēl Anets‘i yew sharunakoghner**, Zhamanakagrut‘iwn (Adamits‘ minch‘ew 1776 t‘.), ashkhatasirut‘yamb K. Mat‘evosyani, Yer., “Nairi”, 2014 **(In Armenian)**.
44. **Shaljyan S.**, Vaspurakani t‘agavorut‘yan patmut‘yunits‘, HSSṚ GA “Teghekagir” has. git., 1949, N 4 **(In Armenian)**.
45. **Stepanenko V.**, Iz istorii Armjano-vizantijskix otnoshenij vtoroj poloviny X-XI v., “Antichnaja drevnost‘ I srednije veka”, Sverdlovsk, 1978, vyp. 15 **(In Russian)**.
46. **Step‘anos Tarawnets‘i Asoghik**, Patmut‘iwn tiezerakan, “Matenagirk‘ Hayots‘”, hat. ZhYe., Zh. dar, Patmagrut‘iwn, girk‘ B, Yer, YePH hrat., 2011 **(In Armenian)**.
47. **Ter-Ghevondyan A.**, Arabakan amirayut‘yunnerĕ Bagratunyats‘ Hayastanum, Yer., Haykakan SSṚ GA hrat., 1965 **(In Armenian)**.
48. **T‘ovma Artsruni yew Ananun**, Patmut‘iwn tann Artsruneats‘, “Matenagirk‘ Hayots‘”, hat. ZhA., Zh. dar, Patmagrut‘iwn, Ant‘ilias-Libanan, 2010 **(In Armenian)**.
49. **Ut‘mazyan H.**, Syunik‘ĕ IX-X darerum, Yer., Yerevani hamalsarani hrat., 1958 **(In Armenian)**.
50. **Vardanyan V.**, Vaspurakani Artsrunyats‘ t‘agavorut‘yunĕ 908-1021 t‘t‘., Yer., Yerevani hamalsarani hrat., 1969 **(In Armenian)**.

51. **Yakobean A**., Matt‘ēos Uṛhayets‘u vkayut‘iwně 961 t‘uakanin Anin mayrak‘aghak‘ hṛch‘akelu masin (nor aghbyuragitakan k‘nnut‘yun), “Merdzavor yev mijin Arevelk‘i yerkrner yev zhoghovurdner”, XXIX, Yer., 2014 **(In Armenian)**.
52. **Yeghiazaryan A**., Abas Bagratuni: T‘agavor hayots‘, Yer., YePH hrat., 2017 **(In Armenian).**
53. **Yeghiazaryan A**., Ashot G. Voghormatsi darashrjaně: Mas A. Hayots‘ t‘agavorut‘yan verelk‘ě (953-966 t‘t‘.), “Vēm”, Yer., 2019, N 3 **(In Armenian)**.